

Պիեռ Օդդոն<sup>a</sup>

## ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՄ

## ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶ ՄԱՏՅԱՆԻ ՆԵՆԳԱՓՈՒԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ)

Ֆրանսերենից թարգմանեց Լ. Գ. Մարկոսյանը  
Խմբագիր՝ Ղևոնդ քահանա Մայիլյան

ԵՐԵՎԱՆ - 2004

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

---

<sup>a</sup> Հեղինակը Եհովայի վկա չի եղել երբեք:

## Բովանդակություն

Երկու խոսք.....

Առաջաբան.....

Նամակ՝ ուղղված համապատասխան Ընկերությանը .....

1. Ի՞նչ է TMN<sup>\*)</sup>-ը.....

    Անգլերեն հրատարակություն .....

    Ֆրանսերեն հրատարակություն .....

2. ՆԱԹ-ի նկարագրությունը .....

    Բնագրերից չի թարգմանված .....

    Անանուն է .....

    Այն ներդաշնակ է ներշնչյալ տեքստերին .....

    Թույլ է տալիս միտումնավոր հավելումներ.....

3. Եհովա անվան գործածությունը.....

    Աստծո անունը Եհովա<sup>o</sup> է.....

    Աստծո անունը .....

    Տետրագրամն օգտագործվում է հունարեն Նոր Կտակարանում.....

4. Աղավաղման միջոցներ.....

    Սկսած բնագրերից .....

    Թարգմանության միջոցով .....

Եզրակացություն.....

Հավելված .....

Օգտագործված գրականության ցանկ .....

<sup>\*)</sup> Նոր Աշխարհի Թարգմանություն, հետ այսու՝ ՆԱԹ:

## Աստվածաշունչն ասում է.

«Փորձեցեք ամեն ինչ: Բարին ամուր պահեցեք...»

(Ա. Թեսաղ. 5.21)

«Քննեցե՛ք դուք ձեզ՝ տեսնելու, թե նույն հավատի մե՞ջ եք. փորձեցե՛ք դուք ձեզ. չգիտե՞ք, թե Քրիստոս Յիսուս ձեր մեջ է, այլապես կլինեիք անպիտան»:

(Բ. Կորնթ. 13.5)

Որոշ «Եհովայի վկաներ» կարծում են.

Այն, ինչ դուրս է գալիս Կազմակերպությունից՝ ճշմարտություն է, կարիք չկա ստուգելու:

Այն, ինչ դրսից է գալիս՝ կեղծ է, հարկ չկա հարց ու փորձ անելու:

## Երկու խոսք

Հայ եկեղեցու, ինչպես նաև բոլոր ուղղափառ եկեղեցիների համար «սրբության սրբոց» է համարվում Աստվածաշունչ մատյանը, որը մեզ, հայերիս համար ավելի է արժեքավորվում այս օրերին՝ մաշտոցյան գրերի գյուտի 1600-ամյակի շեմին: «Թագուհի թարգմանությանց», ահա այսպես են անվանել Աստվածաշնչի մաշտոցյան թարգմանությունը, որը արդեն 16 դար Աստվածային պատգամները գրեթե անսխալ հաղորդում է մեզ: Եվ, որպես կանոն, բոլոր քրիստոնեական եկեղեցիների վարդապետությունը և դավանանքը, հենվում է Աստվածաշնչի վրա: Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ չենք գտնի մեկ դեպք անգամ, երբ փորձ արվի սրբագրել Աստվածաշունչ մատյանը, ստեղծելով մի նոր թարգմանություն, որը համաձայնեցվի վարդապետությանը կամ դավանանքին: Սակայն վերջերս՝ ընդամենը 50 տարի առաջ մնան փորձ արվեց, տխրահռչակ «Եհովայի վկաների» կազմակերպության կողմից:

Նրանց հավաստումով իրենց այդ նոր՝ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ՆԱԹ) կոչվածը ամենակատարյալն է ու հավաստին, մինչդեռ մնացած բոլոր գոյություն ունեցողները՝ թերի ու սխալ: Բնական է, որ նրանց տեսակետը հենց այդպիսին էլ պիտի լիներ. բրուկլինյան դավանանքը անհամապատասխան է կանոնական Աստվածաշունչ մատյանին, և դա հասկացավ այդ Կազմակերպության ղեկավարներից՝ Նաթան Նորրը, և ձեռնարկեց ՆԱԹ-ի պատրաստման գործը, ուր ընդունված սկզբունքներին (Եհովայի վկաների դավանանքին) պետք է համապատասխանեցվեին կանոնական Աստվածաշնչի համապատասխան տեղերը:

ՆԱԹ-ի առաջին հրատարակությունները անգլերեն լեզվով են արված, և չնայած թարգմանչական կոմիտեի հավաստման, թե այն բնագրերից է արված, քննությամբ չի հաստատվում. անգլերեն հայտնի KJV-ը ուղղակի վերաշարադրել են իրենց սկզբունքների համաձայն և ուրիշ ոչինչ: Հիմք ընդունելով այդ «ստեղծված» բնագիրը՝ այն արդեն թարգմանվել է ֆրանսերեն, մասամբ նաև ռուսերեն, և շուտով կներկայացվի, դրանում կարող ենք չկասկածել, նաև հայերեն թարգմանությունը: Ուստի կարևորում ենք այս գրքի հայերենով լույս ընծայվելը, չնայած վերլուծությունը արված է ֆրանսերեն տարբերակի վրա: Բնական է, որ այն նույնն կլինի նաև մնացած լեզուներով թարգմանություններում՝ այդ թվում նաև հայերենով սպասվող տարբերակներում: Ցավոք մեզանում այդ նյութի վերաբերյալ գրեթե հայերեն գրականություն չկա, չհաշված Ջարեհ եպս. Ազնավուրյանի «Եհովայի վկաներու այլափոխված աստվածաշունչը» գրքույկը՝ հրատարակված Անթիլիասում՝ 1992 թ.:

Թե ի՞նչ է իրենից ներկայացնում նաթանյան ՆԱԹ-ը, և ինչ է ստացվել այդ «գոհարից», հայ ընթերցողը կգտնի ներկայացվող գրքույկի էջերում:

ՂԵՎՈՆԴ ՔԱՅԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Շատերը հասկանալիորեն հարց են տալիս, թե որտեղի՞ց գտնենք իսկական մի Աստվածաշունչ: Սակայն ընդհանուր կարծիքը հաճախ ճիշտ չի լինում.

«Բոլոր Աստվածաշունչներն էլ իրար նման են», կամ

«Բոլորն էլ իրարից տարբերվում են, յուրաքանչյուրն իր Աստվածաշունչն ունի»:

Այսպես են ասում կաթոլիկների, բողոքականների Աստվածաշնչի մասին (որը կույս Մարիամի մասին չի պատմում)...

Այդօրինակ չիմացության դեմ մենք առաջարկում ենք մի քանի տարրական սկզբունքներ.

Աստվածաշունչն ամբողջական է, միասնական է.

հրեական գրքերը կազմում են Հին Կտակարանը,

քրիստոնեական գրքերը՝ Նոր Կտակարանը:

Առաջին գրքերը գրված են եբրայերեն, որոշ գրքեր էլ՝ արամեերեն, և թվով 39-ն<sup>a</sup> են:

Երկրորդները գրվել են հունարեն, և 27-ն են:

Այս 66 գրքերը կազմում են քրիստոնեական տարբեր դավանանք ունեցող եկեղեցիների Սուրբ Գիրքը<sup>b</sup>:

Ֆրանսիացի թարգմանիչների մեծ մասը, չտիրապետելով հունարենին և եբրայերենին, աստվածային պատգամի թարգմանությունը կատարել են խոսակցական լեզվով: Այս տարբերակներն իրենց վրա կրում են կամ թարգմանչի<sup>b</sup> կամ տեղի, որտեղ այն թարգմանվել է<sup>c</sup>, կամ որևէ այլ բնութագրական անվանում<sup>d</sup>:

Այս թարգմանիչները կարող էին լինել կաթոլիկ, բողոքական, հրեա, աթեիստ և այլն: Թե որչափով էին նրանք որակյալ և մասնագետ՝ ասում է նրանց կատարած գործը՝ Աստվածաշնչի թարգմանությունը:

Կարելի է ասել, որ Աստվածաշունչը բողոքականի կամ կաթոլիկի թարգմանություն է, բայց պատշաճ չէ ասել. «Սա բողոքական Աստվածաշունչ է» կամ «Կաթոլիկ Աստվածաշունչ»: Կա միայն մեկ Աստվածաշունչ՝ այդ է փաստում մեր օրերում լույս տեսած, էկումենիկ թարգմանությունը՝ կաթոլիկների, ուղղափառների և բողոքականների միացյալ թարգմանությամբ: Ինչպես ասում են. մի՞թե կարող էր կաթոլիկների և բողոքականների մույն Աստվածը, տարբերվել մեկի կամ մյուսի համար:

1974-ին «Եհովայի վկաները», որ բոլոր թարգմանությունները համարում էին «թերի, նույնիսկ ամենավերջին նոր թարգմանությունը»<sup>(1)</sup><sup>e</sup>, ֆրանսերեն մի նոր տարբերակ հրատարակեցին. «Սուրբ գրություններ: Նոր աշխարհի թարգմանություն (TMN)» վերնագրով<sup>f</sup>:

Այս թարգմանությունը (ինչպիսին էլ լինի նրա ծագումը) վավերական, պատշաճ կատարված, թե՛ նպատակաուղղված. կարելի՞ է համարել Աստվածաշնչի ֆրանսերեն թարգմանություն, թե՞ համարել «Եհովայի վկաների» գաղափարների տարածմանն ուղղված միտումնավոր մի հրատարակում:

Պա էլ կլինի մեր ուսումնասիրության թեման:

a Պարզեցնելու համար մեր շարադրանքը մենք չենք խոսի երկրորդական և պարականոն գրքերի մասին: Նյութերն այս մասին կուղարկվեն առաջին իսկ պահանջի դեպքում:

\* ) Սրանք կազմում են նախականոն գրքերը, Ուղղափառ բոլոր եկեղեցիների կանոնն ընդգրկում է 12 երկրորդականոն գրքեր ևս (*խմբ.*):

b Օստի, Սեզոնդ, Պարբի:

c Երուսաղեմ, Մարեդսու:

d Էկումենիկ, 100-ամյակին:

e Փակագծերում եղած բոլոր թվերը տես ծանոթագրություններում, ուր կարող եք գտնել մեջբերումների հղումները: Խոսքը հատկապես «Եհովայի վկաների» հրատարակած գրքերի մասին է:

f Հետայսու՝ ՆԱԹ, որ նշանակում է Նոր Աշխարհի Թարգմանություն (ֆրանսերեն տարբերակը):

### Անպատասխան մնացած նամակ

1980թ. հոկտեմբերի 2-ին պատվիրված ուղարկված մի նամակ:

1986թ. հոկտեմբերի 2, վեց տարի սպասեցնելը փաստում է, որ Ընկերությունը չի կարող պատասխանել, անկասկած, անկախ իրենց կամքից նրանք հաստատում են այն, ինչ կա գրված այս գրքույկում:

Անցել է ժամանակը, երբ «Եհովայի վկաներն» իրենց գրքույկների վերջում գրում էին. «Մենք մարտահրավեր ենք նետում նրան, ով փորձի մեկ հարց տալ ճշմարտության որոնման ճանապարհին՝ Ս. գրությունների վերաբերյալ, որքան ճշգրիտ և տրամաբանական տրամաբանական էլ լիլի» (2):

Պիեռ Օդդոն  
Մարտի, 1 հոկտ. 1980թ.

### Անպատասխան մնացած նամակ:

Պարոնայք,

1979թ. սեպտեմբերի 18-ին, Աստվածաշնչի սկզբնաղբյուրների թարգմանության կապակցությամբ, իմ նամակով ես Ձեզ խնդրել էի կապի մեջ մտնել Ձեր լեզվաբան-թարգմանիչների հետ: 1979թ. սեպտեմբերի 22-ի նամակով Դուք ինձ պատասխանեցիք. «Մենք չենք կարող ընթացք տալ Ձեր պահանջին, քանի որ թարգմանիչները անանուն հեղինակներն են»:

Ուստի. ես առաջնորդվեցի հին լեզուների մասնագետների օգնությամբ համեմատելու Ձեր, այսպես ասած, Նոր աշխարհի թարգմանությունը եբրայերեն և հունարեն սկզբնաղբյուրների հետ: Փաստերով հաստատված մեր այս գրքույկի եզրակացությունն այն է, որ Ձեր թարգմանությունը ինքնանպատակ է. հիմնական շատ հատվածներում ֆրանսերենում չի տալիս այն, ինչ գրված է եբրայերենում կամ հունարենում: Դա մեզ անհանգստացրեց:

Թեպետ թեմայի վերաբերյալ մեր լուրջ որոնումները, որ առաջարկում ենք ընթերցողներին՝ մտորելու, սահմանափակ է, հնարավոր է նաև, որ մենք էլ երբեմն չենք հասկացել Ձեր միտքը, ուստի Ձեզանից պահանջում են, որ մինչև վերջնական հրատարակությունը տեղյակ պահեք Ձեր դիտողությունների մասին:

Դուք, իհարկե, հաստատ երջանիկ կլինեք իմանալու, որ «սերը ճշմարտության մեջ է» (Բ Գովհ. 1)<sup>\*</sup> և այդ ինձ մղում է բացահայտելու բազմաթիվ վտանգներ, որ դարանակալում են Աստծո ժողովրդին: Անկասկած, ես փորձեցի գործնականում կիրառել այն խրախուսանքները, որ տալիս եք Ձեր գրքույկի 12-րդ էջում. «Հարցեք, որ մարդիկ տալիս են «Եհովայի վկաներին»:

«Իսկական քրիստոնյաները պետք է նմանվեն Հիսուսին և իր աշակերտներին, քողազերծելով սխալը» (Մաղաք. 1.6-9, Բ Կրնթ. 10.4-5, Մատթ. 23: 13-36):

Եթե որևէ կետում սխալվել ենք, մի վարանք մեզ հայտնելու, որի համար կանխավ շնորհակալություն ենք հայտնում:

Տեխնիկական պատճառներով Ձեր պատասխանը, նույնիսկ՝ հակիրճ, մինչև Նոր տարի անհրաժեշտ է: Այդ սպասումով, Պարոնայք, հաճեցեք ընդունել, իմ քրիստոնեական ամենամիլիարական զգացմունքների արտահայտությունը:

Պիեռ Օդդոն

<sup>\*</sup> Հայերենում մի քիչ այլ է՝ «ճշմարտությամբ եմ սիրում»:

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

---

Ի՞նչ է ՆԱԹ-ը

- **Անգլերեն հրատարակություն**
  - Ի՞նչ են մտածում «Եհովայի վկաները» այդ մասին
  - Ի՞նչ են մտածում մյուսները
- **Ֆրանսերեն հրատարակություն**
  - Ի՞նչ են մտածում այդ մասին «Եհովայի վկաները»
  - Ի՞նչ են մտածում մյուսները

## Անգլերեն հրատարակություն

Որոշ տեղեկություններ տանք ՆԱԹ անգլերեն հրատարակության վերաբերյալ, քանի որ, ինչպես տեսնելու ենք ավելի ուշ, այդ թարգմանությունն է հիմք ծառայել ֆրանսերեն թարգմանության համար:

### Ի՞նչ են մտածում այդ մասին «Եհովայի վկաները»

- ՆԱԹ-ի անգլերեն լեզվով այս ԳԵՐԱԶԱՆՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ լույս ընծայելու համար դիմել ենք դարերի ընթացքում աստվածաշնչյան լավագույն մեկնիչներին:<sup>(3)</sup><sup>a</sup>
- Այս թարգմանությունը ճիշտ է եւ ՎՍԱՅՈՒԹՅԱՆ արժանի... այն մեծ ուրախություն է պատճառում նրանց, ովքեր ցանկանում են լսել մարդկանց ուղղված Աստծո խոսքը՝ ժամանակակից և կենդանի լեզվով (4):
- ՏԵՔՍԸ ԱՉԴԵՑԻԿ Է ԵՎ ԴՅՈՒՐԸՄԲՈՆԵԼԻ՝ հենց առաջին ընթերցումից: Որ թարգմանությունն ընդունվեց միաձայն՝ այդ է վկայում այն փաստը, որ իր լույս ընծայման առաջին օրից՝ 1961թ. հունիս ամսից մինչև 1963թ., այն լույս տեսավ մեկ հատորով 3.662.400 տպաքանակով: Սուրբ գրությունները՝ Նոր աշխարհի թարգմանությամբ՝ ԱՍԾՈՒՆՈՒՄԻ ՉԱՎԱՏԱՐԻՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ Է, «Յոգու Սուրը» (5):
- Փառք տանք Աստծուն Նոր Աշխարհի ՊԱՐԶ ԵՎ ՃՇԳՐԻՏ թարգմանության համար (6):

### Ի՞նչ են մտածում ուրիշները

- Պետք է խոստովանել, որ մեզ ներկայացված է անգլերեն ժամանակակից լեզվին հնարավորին չափ հավատարիմ մի թարգմանություն: Փաստորեն լեզուն դժվար հասկանալի անգլերենով է, և հիշեցնում է սկսնակ դպրոցականի կողմից արված լատիներենից անգլերենի թարգմանած մի գործ, որը հիասթափեցնում է լուրջ ընթերցողին, և փոխանակ հարգանք ներշնչելու Աստվածաշնչի նկատմամբ, ինչպես խոստովանում են թարգմանիչները, այն անարգական վերաբերմունք է առաջացնում Աստծո խոսքի հանդեպ:<sup>b</sup>
- ՆԱԹ-ը ժամանակակից անգլերենով Աստվածաշնչի օբյեկտիվ թարգմանություն չէ, այլ կազմակերպության կողմից նենգափոխված մի թարգմանություն, որի մեջ բազմաթիվ հրահանգներ են խարդախ ճանապարհով թափանցել Դիտարանի ընկերության կողմից<sup>c</sup>: Մենք Նոր կտակարանի թարգմանությունից առանձնացրել ենք նենգափոխության և խաբեության մի քանի նշանավոր օրինակներ, որոնք կարող են շատ ազնիվ անհատների հիասթափեցնել և որակազրկել «Եհովայի վկաների» թարգմանության արժեքը<sup>d</sup>:
- Մենք այս թարգմանությունը համարում ենք անհաջող և Աստծո Սուրբ խոսքի միտումնավոր այլափոխում<sup>e</sup>:

<sup>a</sup> Այստեղ, ինչպես մեջբերումների մեծ մասում, ընդգծումները մերն են:

<sup>b</sup> Պրոֆ. Տոուլեյ (արվեստաբան, գրականագետ, աստվածաբանության դոկտոր), "The expository Times", նոյեմբ. 1953թ., էջ 41-42:

<sup>c</sup> Անտոն Յոելենա (աստվածաբանության դոկտոր), «Չորս մեծ աղանդները», էջ 242:

<sup>d</sup> Մարտին Ուոլտեր, «Աղանդների թագավորություն», էջ 64:

<sup>e</sup> Յենրի Յեյդտ, Եհովայի վկաները եւ նրանց թարգմանությունը:



## Ֆրանսերեն հրատարակություն

### Ի՞նչ են մտածում «Եհովայի վկաներն» այդ մասին

• Ֆրանսերեն տարբերակը «Նոր աշխարհ» կոմիտեի աստվածաշնչյան թարգմանությունը չէ, այլ՝ կոմիտեի կատարած աշխատանքների արտացոլումն է: Այն Դիտարանի Ս. Գրոց և Տետրակի Ընկերության ֆրանսիացի թարգմանիչների բարեխիղճ և հավատարիմ թարգմանությունն է (7):

• ...Ժամանակակից ֆրանսերենով հեշտ և հասկանալի Աստվածաշնչի մի գերազանց թարգմանություն (8)...

• ՃՇԳՐԻՑ ԵՎ ՅԱՎԱՏԱՐԻՄ թարգմանություն է (9)...

• Այն գործածում է ՊԱՐԶ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ լեզու... ՆԱԹ-ի թարգմանությունն արտահայտում է ժամանակակից խոսակցական լեզվի ուժը, գեղեցկությունը և Սուրբ գրության ձեռագրերի իմաստը (10):

• Տրամաբանական է, որ ժամանակակից թարգմանությունները (ինչպես օրինակ. Նոր Աշխարհը) արդեն 3-4 դար է, ինչ հրաժարվել են հին ավանդական լեզվից և, որպեսզի ընթերցողն իրապես հասկանա Աստվածաշնչի պատգամը, օգտվում են պարզ, արտահայտիչ և ժամանակակից լեզվից (11):

### Ի՞նչ են մտածում մյուսները

• Այդ գրքի հիմնական բնութագիրը աստվածաշնչյան որոշ հատվածների նենգափոխված թարգմանությունն է, հատկապես՝ Քրիստոսի աստվածային էությունը հաստատող հատվածների ներկայացնելը այն ձևով, ինչպես հարմար են գտել ռասեալական աստվածաբաններ<sup>a</sup>:

• Օգտագործելով ՆԱԹ, մենք հաստատում ենք, որ որոշ հատվածների իմաստները տկար կամ ձևափոխված են... ՆԱԹ-ը հավատարիմ չի մնացել բնագրի տեքստին<sup>b</sup>:

• Աստվածաշնչյան ոչ մի թարգմանություն այդքան միտումնավոր չէ... Այն շեղում է Աստծո խոսքի արտահայտությունների իմաստը Ընկերության գաղափարախոսության օգտին՝ առանց չնչին խղճմտանք զգալու տեքստի հանդեպ<sup>c</sup>:

• Այս թարգմանությունը շաղախված է Դիտարանի հերձված վարդապետական սկզբունքներով, «հարստացված» իրենց անհատական մեկնություններով և հավելումներով: Նրանք ասում են, որ իրենք գրական թարգմանություն են կատարել, բայց առաջնորդվել են իրենց սեփական օրենքներով<sup>d</sup>:

## Ազնիվ խոստովանություն

• Ինչպես բաբախեց մեր սիրտն ուրախությունից, երբ անցյալ ամառ ստացանք Նոր աշխարհի թարգմանությունը: Վերջապես մեր ձեռքն ընկավ ամբողջական Աստվածաշունչ: Մենք, որ առիթ ունեցանք ավելի մոտիկից ուսումնասիրելու այդ նոր տարբերակը, ի՞նչ կարող ենք հաստատել. նախ այն, որ բառարանը նորացված է, և որ ԲԱԶՄԱԹԻՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ կան: Գուցե Ձեր նախասիրած որոշ հատվածներ անճանաչելի լինեն Ձեզ: Այդ ամենը կգրավի Ձեր ուշադրությունը: Բացի այդ թարգմանությունը աչքի չզարնող շատ ուրիշ առանձնահատկություններ էլ ունի...<sup>e</sup>:

a Պրոֆեսոր Ժ. Մ. Նիկոլ (Սեզոնդի Աստվածաշնչի թարգմանչական կոմիտե), «Արդյո՞ք իրավացի են Եհովայի վկաները», էջ 6 (1979թ.):

b Լուա Սերժ, «Մի քանի պատասխան Եհովայի վկաներին», էջ 18-20:

c Ֆ.Գոնին, «Ավետարանական համաձայնություն», թիվ 250, էջ 4 (հոկտ.79):

d «Ովքե՞ր են Եհովայի վկաները», էջ 8-9 ըստ Ժ.Վ.Շնելի, Դիտարանի ընկերության նախկին ծառայող:

e Եբրայական սուրբ գրություններ՝ ըստ Նոր Աշխարհի թարգմանության, NMR, մարտ 1975թ., էջ 3:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

---

## ՆԱԹ-ի նկարագիրը

- ՆԱԹ-ը բնագրից չի թարգմանված
- ՆԱԹ-ը անհեղինակ է
  - Խմբագիրներն անհայտ են
  - Թարգմանիչներն անհայտ են
- ՆԱԹ-ը համապատասխանում է իրեն թելադրող տեքստերին
  - Տեքստեր, որ թվում է թե հակասության մեջ են
  - Տեքստեր, որ հակասում են լոկալիզացիայի տեսակետներին
- ՆԱԹ-ը պարունակում է միտումնավոր հավելումներ
  - Կարևոր ցանկ
  - Հավելված
  - Հրատարակչական

## ՆԱԹ-ը սկզբնաղբյուրներից չի թարգմանված

Այն ներկայացվում է այսպես.

*Սուրբ Գրություններ, Նոր Աշխարհի Թարգմանություն:*

*Թարգմանությունը կատարվել է 1971 թ. անգլերեն վերանայված հրատարակությունից՝ երբայերենի, արամեերենի և հունարենի համեմատությամբ (12)<sup>ա</sup>:*

Ավելին.

*Այսպես լույս տեսան առաջին հատորի մեջ ամփոփված Սուրբ գրությունների 66 գրքերը ֆրանսերեն լեզվով: Բոլոր գրքերն էլ վերցված են անգլերեն վերանայված թարգմանության 1971թ. հրատարակությունից (13):*

Մեկ դարից ավելի է՝ Աստվածաշնչի բոլոր թարգմանությունները կատարվում էին բնօրինակներից, համեմատությամբ՝ գոյություն ունեցող տարբեր թարգմանությունների: Այստեղ, ինչպես ամենուր<sup>բ</sup>, «Եհովայի վկաները» հակառակն են արել. թարգմանել են անգլերենից և հետո հաշվի առել բնօրինակները: Ուրեմն, ինացած եղեք, որ գործ ունեք թարգմանությունից կատարված թարգմանության հետ, որը կասկած է հարուցում: Երկար դարերի ընթացքում Վուլկաթան՝ լատիներեն Ս. Գիրքը, որպես ներշնչված տեքստ, հիմք է հանդիսացել բոլոր թարգմանությունների համար<sup>գ</sup>: Եվ ո՞վ է տեսել, որ XX դարի վերջին կտեսնենք մի նոր «Վուլկաթա»՝ անգլերենով, հրատարակված «Եհովայի վկաների» կողմից, որ պիտի փոխարիներ ներշնչյալ (աստվածաշունչ) տեքստերը: Գործնականում անգլերենը աստվածաշունչ տեքստերն անտեսել է, և բնագրի լեզուները՝ եբրայերենը, արամեերենը և հունարենը դարձել են օժանդակ միայն... Ահա այսպես են «Եհովայի վկաները» վարվել ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, պորտուգալերեն, նիդեռլանդերեն թարգմանությունների դեպքում՝ է հիմք ընդունելով անգլերեն թարգմանությունը (16):

«Եհովայի վկաների» բռնած դիրքը նույնքան անհասկանալի է, որքան իրենց գրքերում արված հետևյալ դիտողություններն անգլերեն ՆԱԹ-ի վերաբերյալ.

*Հատկապես 1946թ. սկսած «Դիտարանի Ս. Գրոց և Տետրակի Ընկերության» նախագահը որոնումների մեջ էր՝ գտնելու մի թարգմանություն, որ հավատարիմ լիներ բնագրի լեզվին... (17):*

*Պետք է նշել նոր աշխարհի թարգմանության բնորոշ հատկանիշների է այն, որ սկսած բնագրի լեզուներից՝ եբրայերենից, արամեերենից և հունարենից, այն ներկայացնում է մի նոր թարգմանություն: Նախ և առաջ, այն ոչ մի ձևով չի ընդունում անգլերեն մեկ այլ թարգմանություն, չի պատճենում նրա ոճը, բառապաշարը և ռիթմը (18):*

Զե՞ որ ֆրանսերեն ՆԱԹ-ն այդտեղ խոստովանում է, որ չի կարելի իրեն վստահել: Փոխանակ դրվատելու Ջերոնիմոսի «Վուլկաթան»՝ լատիներեն թարգմանությունը, «Եհովայի վկաներն» ասում են. «Այն թարգմանության թարգմանություն չէ» (19): Ուրեմն ինչո՞ւ, այդ դեպքում, ֆրանսերեն ՆԱԹ-ը «թարգմանության ճիշտ թարգմանություն է» համարվում:

a Բոլոր հատվածները վերցված են «Եհովայի վկաների» հրատարակած գրքերից. կեքստերի ֆոտոպատճենները կարելի է ձեռք բերել:

b «Եհովայի վկաները» պետք է ուսումնասիրեն «Դիտարանի» պարբերականը Ս. Գրությունների օգնությամբ (14) և Աստվածաշնչի լույսի տակ (15):

c Այս թարգմանությունը շատ տեղերում թերի է արված: Լսենք «լատիներեն նոր Վուլկաթայի» հրատարակիչների վկայությունը (1979). «Վատիկանի երկրորդ ժողովն անհրաժեշտ է համարում վերանայել Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը»:

## ՆԱԹ-ն անհեղինակ է

Այն կրկնօրինակ է:

### Հրատարակիչն անհայտ է:

Եթե Դուք անգլերեն չգիտեք և չեք կարող կարդալ, բայց գիտեք, որ «Դիտարանը» «Եհովայի վկաներին» համարժեք է, կհասկանաք, որ այդ Աստվածաշունչը նրա հրատարակածն է, և որ այն աննկատելիորեն թափանցում է բազմաթիվ ընտանիքներ, որոնք, եթե իմանային դրա ծագման մասին, երբեք չէին համաձայնի կարդալ:

### Թարգմանիչներին չեն ճանաչում:

- **Բնագիրը, որից թարգմանել են՝ անգլերենն է:**

*Աստվածաշնչի թարգմանության Նոր աշխարհի հանձնախումբը գտնում է, որ հրատարակիչի և նրա անդամների տիտղոսների հարցը կարևոր չէ. այսպես թե այնպես, թարգմանությունն ինքը վկայում է նրանց կարողությունների մասին (20):*

*Այս հանձնախմբի անդամները պահանջում են անհայտ մնալ, չհրապարակել իրենց անունները, նույնիսկ մահվանից հետո: Մենք հարգեցինք նրանց ցանկությունը(21)<sup>ա</sup>:*

Մեզ հայտնի է զանազան Ընկերությունների կողմից արված ֆրանսերեն շատ թարգմանություններ: Դրանցից ամենահայտնիներն են՝ «Երուսաղեմյան Աստվածաշունչը» և «Էկունենիկ Աստվածաշունչը» (TOB), Սեգոնդի թարգմանությունը՝ վերանայված 1978թ.: Մենք շատ ուրախացանք, երբ այս գրքերի առաջին էջերում գտանք խմբագիրների և թարգմանիչների անունների ցուցակը, ուր յուրաքանչյուրը ստանձնում է իր պատասխանատվությունը: Յուրաքանչյուր ոք կարող է ստուգել թարգմանիչների աշխատանքների որակը:

Ինչ վերաբերում է ՆԱԹ-ին՝ ոչ ոք չի կարող և երբեք չի կարողանա իմանալ բնագրից անգլերեն կամ անգլերենից ֆրանսերեն թարգմանության պատասխանատուներին: Հնազանդություն: Ով որ ծանոթ է «Եհովայի վկաներին» և նրանց հրատարակածներին՝ (հատկապես տեղեկագրերին), դատապարտված է հավատալու:

Բայց մյուս կողմից, ինչո՞ւ են ցանկանում անհայտ մնալ նաև իրենց մահվանից հետո: Չէ՞ որ այս դեպքում հպարտանալու վտանգ չկա: Ուրեմն՝ ինչո՞ւ: Հավանաբար.

- քանի որ այդպիսով ցանկանում են քողարկել թարգմանիչների որակը,
- չեն ցանկանում հարցման ենթարկվել, որպեսզի ի հայտ չգա իրենց վատ թարգմանությունը<sup>բ</sup>:

Քանի դեռ տեղեկատվություն չունենք «աղբյուրից», մենք այստեղ բերում ենք Վիլյամ Սետնարի վկայությունը, ով 8 տարի շարունակ աշխատակցել է «Եհովայի վկաներին» համաշխարհային նստավայրում՝ Նոր աշխարհի անգլերեն թարգմանության հանձնաժողովին:

*«Բեթելում թարգմանիչները, գաղտնի պահելու համար իրենց անունները, դիմում էին ամեն տեսակի զգուշավորության: Պրեզիդենտի մեքենայով Ստադեն Իսլանդիա մեկնելու համար նրանք միասին բոլորից շուտ էին վեր կենում սեղանի մոտից: Երբեմն շաբաթներով մնում էին այդտեղ՝ Բեթել չէին գալիս... Իմ տեսածի համաձայն ես կասեի, որ Ն.Յ.Նորդը, Ֆ.Վ. Ֆրանցը, Ա.Դ.Շրոդերը, Գ.Դ. Գանգասը և Մ. Հենշելը, երբեմն հավաքվում էին թարգմանության նիստերին:*

<sup>ա</sup> Երբ Ֆրանցին (այս վերջինս, որպես ընկերության նախագահ, 1976թ. հաջորդեց Նորին) շտաբանակալ դատարանում հարցրին. «Ինչո՞ւ այդքան գաղտնի»: Նա պատասխանեց. «Կոմիտեն փառք ու պատվից խուսափելու համար պահանջում է գաղտնի մնալ»: Դատավորը պատասխանեց. «Հաճախ հեղինակներն ու թարգմանիչներն իրենց թափած ջանքի համար փառք ու պատվի չեն արժանանում, այնպես չէ՞» (Վ. Սետնար, «Փախուստ Դիտարանից», էջ 15): Սետնարը 8 տարի պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Նորի ու Ֆրանցի կողքին:

<sup>բ</sup> Մենք այդ փորձը կատարել ենք: Տես Պ. Օդդոնի նամակը գրքույկի սկզբում:

*Բացի փոխ-նախագահ Ֆրանցից (մյուսները սահմանափակ կրթություն ունեին)՝ որպես Աստվածաշնչի լուրջ թարգմանչի, կոմիտեի անդամներից ոչ մեկը կրթություն և որակավորում չէր ստանում...»: «Եթե ես լինեի թարգմանչական կոմիտեի կազմում, նույնպես կնախընտրեի, որ ամուսն գաղտնի մնար...»:<sup>բ</sup>*

▪ **Անգլերեն սուրբ գրությունները ֆրանսերեն.**

Ինչ վերաբերում է ՆԱԹ-ի ֆրանսերեն թարգմանությանը, մենք չգիտեինք, որ «Դիտարանի Ս. Գրոց և Տետրակի ընկերության» համապատասխան թարգմանիչները (ՆԱԹ 63, էջ 6), նույնպես պահանջում էին անհայտ մնալ<sup>դ</sup>, և այդ հասկանալի դառնում տեսնելով նրանց աշխատանքի արդյունքը:

---

<sup>բ</sup> «Փախուստ Դիտարանից» էջ 14-16:

<sup>դ</sup> Այժմ մենք դա գիտենք (և համեմատել ենք) «Եհովայի վկաների» Ընկերության 22 սեպտ. 1977թ. թվագրված նամակից (տես Պ. Օդդոնի նամակը գրքույկի սկզբում):

## ՆԱԹ-ը ներդաշնակ է ներշնչյալ տեքստերին

Սրա խորքում մենք կանգնում ենք խնդրի առաջ. ՆԱԹ-ը բնագիր տեքստի ստույգ թարգմանությունը չէ, այլ կամայական: Կորովածիտ ընթերցողը դա կարող է հայտնաբերել որոշակի թվով գրություններում:

### Տեքստեր, որ թվում է թե հակասության մեջ են

*Ինչպես օրինակ հունարեն քրիստոնեական մեջբերումները՝ «հարմարեցնելով» եբրայերեն բնագիր տեքստին (22)<sup>a</sup>:*

Օրինակ, Բ Թագ. 24.1-ում՝ «Եվ Տերը գրգռեց Դավթին հաշվառում անելու», բայց Ա Մնաց. 21.1-ում այդ անողը Սատանան է...: Այդ բացահայտ հակասությունն անմիջապես սրբագրեցին. ՆԱԹ-ը առաջին հատվածը թարգմանեց հարմարեցնելով երկրորդին: «Եվ Տերը (Yahweh՝ բնագրում) գրգռեց» հատվածը փոխարինելով «Երբ գրգռեց»<sup>b</sup>-ով: Հարցրեք որևէ եբրայագետի, թե ի՞նչ կասի այս թարգմանության մասին: Համեմատեք նաև ֆրանսերեն այլ թարգմանությունների հետ<sup>c</sup>:

Այդ նույն ոգով էլ մենք կարդացինք Սարկ. 11.13-ը՝ «որովհետև թզի ժամանակն էր», և այս անգամ էլ ՆԱԹ-ը հեռացել էր բնագրից:

### Տեքստեր, որ հակասում են ընկերության տեսակետներին

*Ավելի ու ավելի է զգացվում ժամանակակից լեզվով թարգմանության կարիքը (23), ներդաշնակ ճշմարիտ հայտնությունը... և դրա կարիքն ավելի ու ավելի ենք զգում:*

Քրիստոնյայի համար «ճշմարիտ հայտնությունը» Աստվածաշունչն է: «Եհովայի վկաների» համար՝ Աստվածաշունչն այնպես ներկայացնելը, որպեսզի այն համապատասխանի «ճշմարիտ խորհուրդներին, որ Եհովան հայտնում է իր նվիրյալ ժողովրդին՝ ով կանչում է իր անունը<sup>d</sup> (հասկանալի է ժողովուրդը «Եհովայի վկաներն» են) (24)<sup>e</sup>:

Այժմ բերենք թարգմանական սկզբունքների մասին մի քանի ճանաչված թարգմանիչների կարծիքներ.

**Վերանայված Սեզոնդ.** Այն սկզբունքը, որին հետևել են վերանայողները, դա հնարավորինս հարազատ գտնվելն է եբրայերեն և հունարեն տեքստերին:

**Դարբի.** «Մեր միակ ցանկությունն ընթերցողին ցանկացած միջոցով նույնքան պարզ և հնարավորինս գրական թարգմանություն տալն է, որը մենք կարող ենք անել»:

Խոսել այնպես, ինչպես ՆԱԹ-ի թարգմանիչներն են խոսում, մի՞թե Սուրբ Գրոց ներշնչականության ժխտում չի նշանակում: Նոր Կտակարանի համաձայնեցումը Հին Կտակարանի հետ, արդյո՞ք Նոր Կտակարանի ներշնչականության ժխտում չէ:

Իրոք, ՆԱԹ 74 6-րդ էջի նախաբանում կարող ենք կարդալ. «Ցանկացել ենք ներկա տեքստը հնարավորինս մոտեցնել բնագիր տեքստին, բայց մենք պետք է նկատի առնենք, որ դա ասվում է բացառիկ ձևով՝ ուղղելու համար թարգմանության նշված տարբերությունները, որոնք առկա են 63-ի և 74-ի հրատարակություններում: Չե՞ք կարծում,

<sup>a</sup> Տես օրինակ Եբր. 1.8 և Ելից 9.6 համարների մեկնությունը Չորրորդ մասում:

<sup>b</sup> Եբրայերեն դարձվածքը երկու հատվածներում էլ նույնն է. նույն կապը, նույն բայը, նույն ժամանակը, նույն դեմքը (III դ. եզ. թիվ՝ որը վերաբերում է նախադասության նշված անձին):

<sup>c</sup> «Եհովայի վկաները» դիտարկում են առանց կասկածի իրենց օգուտի ձեռքը (Հոբ 1.12), որը հարվածեց նրա ունեցվածքին (1.13-17), երեխաներին (1.18-19), իր մարմնին (2.7): Բայց Հոբն այդ բոլոր չարիքներն ընդունում է Աստծու ձեռքից (1.21, 2.10) և գրքի եզրակացությունն է. «Նրանք մխիթարեցին (Հոբին) Տիրոջ (Yahweh) նրան ուղարկած բոլոր փորձանքների համար» (42.11):

\* Հունարենում՝ «թզի ժամանակը չէր» (խմբ.):

<sup>d</sup> «Եհովայի վկաները» քարոզում են ոչնչացնել «Աստծո բոլոր թշնամիներին», հատկապես նրանց, ովքեր մերժում են (չեն համաձայնում ընդունել) ճշմարտությունն այնպես, ինչպես ներկայացված է Դիտարանի հրատարակությունում (25):

<sup>e</sup> IV մասում դուք կգտնեք Եբր. 11.13-16 մեկնաբանությամբ մի տիպական օրինակ:

որ դա արվել է ավելի շուտ «հնարավորին չափով մոտեցնելու այս 74թ.-ի թարգմանությունը ընկերության սկզբունքներին»:

Նշենք մեկ օրինակ միայն, որ վերաբերում է մեր Տեր Հիսուսի անձին.

▪ **Եբր. 1.6**

ՆԱԹ 63-ում - «Որպեսզի բոլոր հրեշտակները պաշտեն»:

ՆԱԹ 74-ում - «Որ Աստծո բոլոր հրեշտակները նրան հարգանք մատուցեն»:

Ինչու՞ է մյուս հատվածներում պահպանվել «պաշտել» բառը:

Արդյոք այնպես չէ՞ն «համաձայնեցրել» տեքստը, որ ավելի համապատասխանի «Եհովայի վկաների» ժամանակակից գաղափարախոսությանը, որ ասում է, թե Հիսուս չպետք է երկրպագության արժանանա (26):

Այնուհանդերձ նշենք, որ ՆԱԹ միակը չէ, որ հունարեն «proskuneo» բայը թարգմանել է «պաշտել»-ով կամ երկրպագելը՝ հարգանք մատուցելով<sup>f</sup>.

Սեզոնդն այն թարգմանում է հիմնականում պաշտել, իսկ Դարբին՝ հարգանք մատուցել, միայն ՆԱԹ-ն է համառորեն թարգմանում հարգանք մատուցել, եթե խոսքը Քրիստոսին է վերաբերում, իսկ մյուս դեպքում՝ պաշտել (բացի՝ Մատթ. 4.9 և Ղուկ. 4.7՝ սատանայի՝ Քրիստոսի փորձության ժամանակ, որտեղ նա թարգմանում է երկրպագություն կատարես)<sup>g</sup>:

Թարգմանություն	Աստված	Հիսուս
Սեզոնդ	պաշտել	Պաշտել
Դարբի	հարգանք մատուցել	հարգանք մատուցել
ՆԱԹ 63	Պաշտել	պաշտել
ՆԱԹ 74	Պաշտել	հարգանք մատուցել

«Եհովայի վկաների» մոտ Սուրբ գրքերը փոխվում են... այն իմաստով, որտեղ փոխվում է նրանց պաշտոնական վարդապետությունը ... Կարծում ենք հեռու է այն ժամանակը, երբ մենք կկարդանք Դիտարանում.

*Այո, մենք հավատում ենք, որ մեր Տերը, երբ երկրի վրա էր, իսկապես պաշտելի էր, և այդ օրինական իրավունքով... օրինական էր, երբ մեր Տերն ընդունում էր երկրպագությունը (27)<sup>f</sup>:*

*Նա ոչ մեկին չի կշտամբել իրեն երկրպագելու համար (28):*

Այդ ժամանակ դեռ հաշվի էին առնում Պենսիլվանիայի Դիտարանի ընկերության սահմանադրության II կետը.

*Ընկերության նպատակներն են՝ ...Ամենակարող Աստծո և Հիսուս Քրիստոսի իրապարակային քրիստոնեական պաշտամունքը, նման պաշտամունքի համար պատրաստել և հավաքներ գումարել տեղական և համաշխարհային մասշտաբներով...*

1934թ. Հիսուս Քրիստոսին դեռ պաշտոնապես պաշտում էին.

*Մենք ուզում ենք հնազանդվել Եհովա Աստծուն և նրա շատ սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ աշխարհի օրինական թագավորին, ծառայել նրանց և պաշտել՝*

1983թ. պետք է ամբողջությամբ փոխվեր Եբր.1.6-ի իմաստը:

*... Այստեղ պետք է հասկանալ մի հարաբերական պաշտամունք, պաշտամունք՝ Եհովա Աստծուն՝ իր փառավորյալ Որդու միջնորդությամբ՝*

<sup>f</sup> Ծագումնաբանորեն հունարեն այդ բայը նշանակում է «շանը պառկեցնել» տիրոջ առաջ, որտեղից էլ՝ «երկիր պագանել - երկրպագել, խոնարհվել»:

<sup>g</sup> Այս երկու համարները Հին Կտակարանից մեջբերումներ են (Բ Օր. 6.13 և Սաղմ. 97.7): Նշենք, որ Սաղմ. 97-ում պատվիրանը պաշտելու Yahweh-ին՝ իրականացվում է Եբր. 1.6-ում Տեր Հիսուս Քրիստոսի համար:

<sup>h</sup> Անգլերենից ֆրանսերեն բոլոր թարգմանություններն արվել են մեր հոգածությամբ:

<sup>i</sup> Ճշմարիտ Բարձրյալը, էջ 26:

<sup>j</sup> Դիտարան, 1983, թիվ 10, էջ 18:

## **ՆԱԹ-ը միտումնավոր թույլ է տալիս հավելումներ<sup>a</sup>**

Ահա ինչպես է ներկայանում ՆԱԹ-ը «Դիտարան»-ի վերջին համարներից մեկում.

*Չեչտությամբ ընկալվող Աստվածաշունչ. Առանց որևէ կասկածի դուք ինքներդ կարող եք գնահատել Սուրբ գրությունների Նոր աշխարհի թարգմանությունը: Աստվածաշնչյան պատմությունը ներկայացված է հասկանալի, կենդանի լեզվով: Այդ 1400 էջանոց աշխատությունը լրացված է համարաբառով, հավելվածով և քարտեզներով (29):*

Քարտեզներից բացի, որոնք դիտողության արժանի չեն, մենք կքննենք հետևյալ երեք «լրացումները».

- Ցանկը,
- Հավելվածը,
- Հրատարակչականը:

### **Կարևոր մի ցանկ (106 էջ)**

Ինչպես այդ կարգի բոլոր ցանկերը.

• **Այն կրկին չի անդրադառնում թարգմանության մեջ օգտագործված բոլոր բառերի** իմաստներին՝ այդպիսով հնարավորություն տալով բաց թողնել թեման, որի մեջ չեն ուզում խորանալ: Մենք արդեն տեսանք, որ ՆԱԹ-ը «pros-Kuneo» (պաշտել) բայը թարգմանում է «հարգանք մատուցել», երբ խոսքը վերաբերում է Տիրոջը՝ Հիսուսին, բայց դուք չեք գտնի բառացանկում «հարգանք մատուցել» արտահայտությունը, այն դեպքում, երբ այնտեղ կա ««հաշիվ տալ»՝ rendre compte» և «շնորհ տալ»՝ «rendre grace»...

• **Այն չի տալիս նույն բառի օգտագործման տարբեր ձևերը.** – Ուրեմն, այստեղ ևս, խնամքով թաքցնելով իրենց մտքերը, նրանք ընտրություն են կատարում՝ չտալով մյուս իմաստները... Օրինակ. «կյանք» բառը չեք գտնի Հովհաննու Ա թղթում, այն դեպքում, երբ նրա 5 գլուխներում այս բառն օգտագործվում է 13 անգամ: Հասկանալի է, որ ՆԱԹ-ը չի ուզում ուշադրություն գրավել այնպիսի մի տարբերակի վրա, ինչպիսին Ա Հովհ. 5.13-ն է, որին նա չի հավատում. «Այս բաները գրեցի ձեզ, որպեսզի գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք, և թե՛ հավատում եք Աստծու Որդու անվանը»:

• **Նա նույն կողմնապահ ձևով լեզվական խառնաշփոթի է ենթարկում** թարգմանչի կողմից օգտագործված բնագրի բառերը: Վերցնելով նույն օրինակը, մենք կասենք, որ ընթերցողը երբեք չի կարող իմանալ, որ հունարեն «pros-Kuneo» բառը ՆԱԹ-ի կողմից ֆրանսերենում ներկայացված է «պաշտել» բառով, երբ խոսքն Աստուծուն է վերաբերում և «պատիվ տալ», երբ խոսքը Քրիստոսի մասին է:

### **Հավելված (14 էջ):**

Այստեղ երևան են գալիս «Եհովայի վկաների» նախընտրած թեմաները: Եբրայերեն, ասորերեն, հունարեն, լատիներեն լեզուներից բազմաթիվ մեջբերումները, որոնք թվում է, թե կատարվել են հմտորեն, միևնույն է, մի նպատակ են հետապնդում. ազդել այդ լեզուներին անծանոթ բազմաթիվ ընթերցողների վրա:

Հետևյալ երեք նյութերն են կարևորվում<sup>b</sup>.

<sup>a</sup> Փոխարենը չեն տալիս տարրական տեխնիկական տեղեկատվություններ թարգմանության վերաբերյալ

– Հին կտակարանի վկայությունների հիշատակումը թույլ է տալիս տեսնելու, որ YAHWEH-ին վերաբերող մարգարեությունները վերաբերում են Հիսուս Քրիստոսին: (Օրինակ, համեմատենք Մարկոս 1.1-3-ը Մաղաքիա 3.1-ի և Եսայի 40.3-ի հետ):

– Նշենք նաև, որ հավելվածը մեզ համար շատ կարևոր է, քանի որ դրանով ուզում ենք ցույց տալ, որ ՆԱԹ-ի հավելվածները միտումնավոր են կազմվել:

<sup>b</sup> Մենք նախընտրում ենք անփորձ ընթերցողին օգնել՝ արագ կողմնորոշվելու համար այնպիսի հարցերում, ինչպիսին են հավատով փրկությունը, մեղավորի և Աստծու միջև հաշտություն գտնելը



- հոգին,
- ճշմարիտ Եհովա Աստվածը<sup>c</sup>,
- դժոխքը:

Մենք չենք կարող այս գրքուկի շրջանակներում մանրամասն ուսումնասիրություններ կայացնել սույն թեմաներից յուրաքանչյուրի վերաբերյալ, և նշենք միայն, որ ՆԱԹ-ի ծանոթագրություններում անաչառության պակաս է զգացվում:

### • Հոգին

Հաճախ այս եզրը Աստվածաշնչում օգտագործվում է «անձ, անհատ» իմաստով, ինչպես այդ արվում է նաև մեր օրերում<sup>d</sup>, բայց ինչո՞ւ «Եհովայի վկաները» համառորեն լռում են այդքան կարևոր՝ հոգու և մարմնի տարբերությունների վերաբերյալ, որոնց մասին խոսում է Աստու խոսքը<sup>e</sup>:

Բերենք մի քանի օրինակներ.

**Էջ 1449.** «Մեռած հոգի կամ դիակ» պարբերության մեջ, նրանք մոռանում են նշել այն կարևոր օրինակը (Գ Թագ. 17.21), որը մեզ ցույց է տալիս, որ հոգին տարբեր է մարմնից. «Եղիան՝ տարածվելով երեխայի վրա, որ մեռած էր, երեք անգամ աղաղակեց Yahweh-ին և ասաց. «Yahweh իմ Աստված, աղաչում եմ այս տղայի հոգին իր մարմնին թող դառնա»: Yahweh-ն լսեց Եղիայի ձայնը, և երեխայի հոգին վերադարձավ իր մարմնի մեջ, և նա կենդանացավ» (տես նաև Գործք 20.10):

Իսկ ի՞նչ ասել Հայտնության 6.9 հատվածի մասին. «Սեղանի տակ տեսա այն մարդկանց հոգիները, որոնք սպանված էին Աստու խոսքի համար...»:

Ի՞նչ են անում, այդ դեպքում, այդ «անգիտակից դիակները», որոնք երկնքում աղաղակում էին՝ մինչև ե՞րբ, այն դեպքում, որ, ըստ Ընկերության տեսության, պետք է գերեզմանում լինեին՝ սպասելով Հարության (հմմտ. Հայտն. 20.4) (31)

**Էջ 1458.** «Հոգին շնչից տարբեր է» պարբերության մեջ բերվում է Ա Թեսաղ. 5.23. համարը. «Ձեր հոգին, շունչը, մարմինը...»: Արդյոք, այս պարբերության ճիշտ վերնագիրը չպետք է լիներ՝ «Հոգին տարբեր է շնչից և մարմնից»:

«Եհովայի վկաները» սիրում են ընդգծել, որ «հոգի» բառը գործածելի է ոչ միայն մարդկանց, այլև կենդանիների համար (32): Դա ճիշտ է, բայց ինչո՞ւ չճշտել, որ նույն բառը երբայերեւում նաև մարմին է նշանակում՝ մարդկանց և կենդանիների: Մինչդեռ Ա Կորթն. 15.39 համարը մեզ պարզ ասում է. «Ամեն մարմին նույն մարմինը չէ. այլ է մարմինը մարդկանց և այլ է մարմինը անասունների, այլ է մարմինը թռչունների և այլ է մարմինը ձկների» և

- որ միայն մարդն ստացավ աստվածային շունչը (Ծննդոց 2.7), մի բան, որով նա տարբերվում է բոլոր կենդանիներից:

### • Դժոխք

Եբրայերեն	Հունարեն	Լատիներեն
SCHEOL	HADES	INFERNUM
Մեռածների կայան (վայր)	Անտեսանելի տեղ	Դժոխք = տեղ ընդերքում

և բերում ենք համապատասխան համարները. Գործք 10.43, 15.11, 16.30-31, 26.18, Հռոմ. 5.1-2, Գաղատ. 2.16, Եփես. 2. 8-10:

<sup>c</sup> Այս թեմայի մանրամասն ուսումնասիրության համար, ընթերցողին առաջարկում ենք նայել հաջորդ գլուխը:

<sup>d</sup> Օրինակ՝ S.O.S հապավումը, որ նշանակում է Save Our Souls = Փրկեք մեր հոգիները = Փրկեք մեզ:

<sup>e</sup> Մի պարզ պատճառով. դա հակասում է Ընկերության պաշտոնական ուսմունքին. «Քանի որ մարդկային հոգին ինքը մարդն է, այն չի կարող լինել աննյութական մի բան, որ ապրում է մարմնի մեջ և գոյություն ունենալ առանձին, դրանից բաժանված» (30).

Ծիշտ է, այս արտահայտություններն իրենց մեջ չեն պարունակում տանջանք - չար-չարանք իմաստը, բայց ճիշտ չի լինի ասել, որ այն նշանակում է գերեզման<sup>f</sup>:

Մյուս կողմից, մահից հետո տանջանքի գաղափարը հաստատված ճշմարտություն է Սուրբ Գրքի բազմաթիվ հատվածներում<sup>g</sup>: Եթե մեր Աստվածը Սեր է, (Ա Զովի. 4.8) չէր կարող չզգուշացնել արարածներին և չասել մեղքի հետևանքների մասին: Չմոռանանք երբեք, որ Աստված նաև Լույս է (Ա Զովի. 1.5):

### Հրատարակչական

**Էջ 1469.** 12-րդ տողում մեզ առաջարկվում է. «ՆԱԹ սուրբ գրությունների» մասին խորհրդածել, մինչդեռ Ս. Գիրքը այլ բան է ասում. «Ոչ թե նա է ընտրյալը, ով ինքն իրեն է գովաբանում, այլ նա, ում Տերն է գովում»:

**Էջ 1469.** 25-րդ տողում, առաջարկելով Ընկերության գիրքը, ասվում է. «Ամբողջ գիրքը Աստծու ներշնչանքով է գրված և օգտակար է»: Մենք միայն մեկ հարց ենք տալիս. եթե Աստվածաշունչը Աստծու խոսքն է, ինչու<sup>o</sup> է հրատարակության մեջ մտցվում մարդկանց գրածները:

---

<sup>f</sup> Սաղմ. 116.3; Եսայի 14.9-20; Եզեկ. 32.17-21; Ղուկ. 16.23. Ծննդոց գրքի 37.35-ում Հակոբն ասում է. «Ես այս սգով էլ կիջնեմ գերեզման՝ իմ որդու մոտ»: Նշենք, որ համաձայն իր եղբայրների պատմածի՝ Հովսեփին գերեզմանում չէին թաղել, նրան մի գազան էր հոշոտել:

<sup>g</sup> Մատթ. 8.12; 13.41-42; 18.9; 22.13; Մարկ. 9.43-44; Հովի. 3.36; Հայտն. 14.10-11; 20. 10,15 և այլն: «Եհովայի վկաների» համար «գիշեր-ցերեկ, տարեց-տարի տանջել» դարձվածքը այլաբանություն է և նշանակում է «իսպառ բնաջնջում»:

# ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

---

## Եհովա անվան գործածությունը

- **Եհովան Աստծո՞ անունն է**
  - Անստույգ ճշմարտություններ
  - Անհավանական արդարացումներ
  - Եհովա բառը պարունակո՞ւմ է Տետրագրամի բաղաձայնները
  - Արտասանությունը կարևո՞ր է
  
- **Աստծո անունը**
  - Ի՞նչ է Տետրագրամը
  - Ամենագործածական անունը
  - Անճառելի անունը
  - Սխալ արտասանություն
  - Ճիշտ արտասանություն
  - Տետրագրամի նշանակությունը
  - Եզրակացություն
  
- **Հունարեն Նոր Կտակարանում Տետրագրամ օգտագործվա՞ծ է**
  - Հունարեն քրիստոնեական մեկնություններում, թե՞ ՆԱԹ-ում
  - Եհովայի վկաները Տետրագրամն ու «Եհովան» կամայականորեն խառնում են իրար
  - Հունարեն բնագրի վավերականությունը
  - Առողջ բանականության և ենթադրություն
  - Եբրայերենից հունարե՞ն
  - ՆԱԹ-ի երեքացող հեմարանները
  - Երբ «Եհովայի վկաները» համագործակցում են «Սատանայի ծառաների հետ»
  - ՆԱԹ-ը «Yehovah» է գործածում ոչ թե հունարեն Տեր, այլ «Աստված» բառի փոխարեն
  - ՆԱԹ-ը, երբ չի ցանկանում, «Եհովա» չի գրում
  - ՆԱԹ-ը «Եհովա» չի գրում, երբ դա իրեն խանգարում է
  - Եզրակացություն

## Եհովան Աստծո անունը և

### Անստույգ ճշմարտություններ

Ի՞նչ կարող են հասկանալ նրանք, ովքեր կարդում են միայն «Եհովայի վկաների» գրքերն ու նրանց թարգմանած Աստվածաշունչը:

*Շատ դարեր, հատկապես Չիսուսի և նրա առաքյալներից հետո Եհովա եզրը հետին պլան էր մղվել և նրա նշանակությունը մթագնել: Աստված այդ մասին հայտնեց իր հավատարիմ ծառաներին: Այդ հայտնության համար հարմար ժամանակներ են, որպեսզի վերականգնվի Եհովայի անունը, որի ժամանակները մոտ են: Դա մենք չենք կարող անտեսել(33):*

Այս պնդումը հիմք չունի:

- Եհովա անվան արտասանությունը ճիշտ չէ, մենք այդ հետո կտեսնենք:

- Այդ տերմինը չէր կարող հետին պլան մղվել «առաքյալների մահվանից հետո», քանի որ այդպիսին գոյություն չի ունեցել, այլ այն ստեղծվել է սխալմամբ՝ մեկ հազարամյակ ավելի ուշ:

- Դա Տետրագրամի իմաստային նշանակությունը չէ, որ կարող էր անտեսվել (այդ մասին բացահայտ ասվում է Ելից գրքում՝ 3.13-15-ում, այլ արտասանությունը<sup>a</sup>:

- Աստված չէր կարող այդ մասին հայտնել միայն «վերջին ժամանակներում» երկու պատճառով. նախ, որ այդ տերմինը ճիշտ չէր, և ապա, որ այն ընդամենը 8 դար է, ինչ գոյություն ունի:

- Եհովա անվան այդպիսի վերականգնումը ճիշտ չէ, քանի որ ժամանակակից բոլոր թարգմանիչները հրաժարվում են դրանից:

Ուրեմն նրանք, ովքեր իրենց կոչում են «Եհովայի վկաներ»՝ Աստծո հավատարիմ ծառաները չեն:

*Աստված իր խոսքով՝ Աստվածաշնչի միջոցով է մեզ ծանոթացնում իր անձնական «Եհովա»<sup>b</sup> անվան հետ (34):*

*Այն, ինչով իրականում տարբերում ենք իսկական Աստծուն կեղծ աստծուց՝ նրա անձնական «Եհովա» անունն է (35):*

*Տիեզերքի բոլոր անուններից Եհովան է Գայրը, ամենամեծը փառքով, կոչումով և հեղինակությամբ (36):*

*Քրիստոնյա կամ հեթանոս ազգերին դա դուր է գայիս, թե ոչ՝ Եհովան աստվածային անունն է (37): Բարձրյալի անունը Եհովա է (38):*

Նրանով, ինչով ձանձրացնում են «Եհովայի վկաները», այսօր հայտնի է բոլոր լեզվաբաններին. Եհովա տերմինը չի առաջացել պատահականորեն, ընդամենը մի քանի դար առաջ: Նրանք այդ ընդունում են հետևյալ մի քանի հայտարարությունների մեջ:

*Իսպանացի դոմինիկյան վանական Ռայմունդուս Մարտինին էր, որ առաջին անգամ աստվածային անունը տառադարձեց «Եհովա» ձևով. ահա 700 տարուց ավելի է՝ վկայում է Պուժո Ֆիդեին իր գրքում (1270թ.) (39):*

*Թեև, ոչ ոք որոշակի չի կարող ասել, թե ինչպես է ճիշտ արտասանել, բայց հին փաստաթղթերը վկայում են, որ մինչև մ.թ. XII դ. այդ բառը կարդացվում էր «Եհովա» և քրիստոնյաների մոտ տարածում էր ստացել այդ ձևով (40):*

*Կարող է Յահվե արտասանությունն ամենաճիշտն էր և անսխալ, բայց դրա լատինական Jehovah ձևը շարունակում է գործածվել որպես Տետրագրամի ֆրանսերեն թարգմանություն և սրբագրվել է այդ գործածությամբ (41):*

<sup>a</sup> Տետրագրամի նշանակություն մասին տես «Տետրագրամի նշանակությունը» բաժնում:

<sup>b</sup> Նշենք նաև, որ այդ արտասանությունը՝ ըստ «Եհովայի վկաների», նշվում է միայն 1270-ից հետո, որից պարզ է դառնում, որ քրիստոնեական դարաշրջանի սկզբում այդ անունը չէ, որ արտասանել են մեր Տեր Չիսուսն ու իր առաքյալները:

Ինչքան էլ ձգտենք «Yah-weh» արտասանել, որպես ճշգրիտ արտասանություն, մենք վերադառնում ենք «Եհովա» ձևին, որովհետև սկսած XIV դարից այն ավելի հարազատ էր դարձել մարդկանց (42):

Ինչ էլ լինի, «Եհովա» անունը միանգամայն ամենահայտնի և ամենագործածական ձևն է: Դարեր շարունակ այն գործածվել է Աստվածաշնչի թարգմանություններում և ամեն տեսակ ստեղծագործություններում: Այն երևում է նաև տարբեր գրություններում (43):

Մենք հարց ենք տալիս, իսկ «խաչ» բառը (ենթադրելով, որ այն ճիշտ չէ), «քրիստոնյաների մեջ ժողովրդականություն չէ՞ր վայելում, չէ՞ր սրբացվել իր գործածությամբ», և «դարեր շարունակ ավելի հարազատ» ու «ավելի ճանաչված և ավելի գործածական» դարձել, այդ բառը չէ՞նք հանդիպում արդյոք Աստվածաշնչի թարգմանություններում և ամեն տեսակ ստեղծագործություններում, որը սակայն բացարձակապես չեն ցանկանում գործածել «Եհովայի վկաները»: Ուրեմն ինչո՞ւ են նրանք համաձայնում Աստծո անձի անվան այդ շատ կարևոր կետում մեղավոր համաձայնության գալ միջնադարյան սովորական հայտնի անճշտության հետ: Գուցե մոռացել են, թե ինչ են ուսուցանում իրենց սեփական գրքերը:

*Քրիստոնեական ներշնչված գրությունները... մեզ չեն ուսուցանում... ընդունել ավանդույթները... մարդկանց, ովքեր իրենց քրիստոնեական սպասավորներ են համարում, ոչ էլ վստահել նրանց (44):*

## Անհավանական արդարացումներ

Հետևյալ երկու հայտարարությունները ձեզ ցույց կտան, թե ինչու «Եհովայի վկաները» չեն կարող անդրադառնալ իրենց սխալին՝ առանց կորցնելու իրենց դեմքը:

*Այնուհանդերձ, օձյալ անդամները՝ բացահայտեցին, որ Աստված իրենց «նոր անուն» է տվել. ոչ տարբեր այն անուններից, որ կարելի է անարգել, մի ոչ սուրբգրային անուն, որ մեր թշնամիների համար աներևակայելի է: Այդ «նոր անունը», որ արտասանվեց Հավիտենականի բերանով, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ «Եհովայի վկաներ»... Նրանք այդ անունն ստացան 1931թ. հուլիսին, ուրախ, առանց վախենալու և ծանաչել տվեցին բոլոր ազգերին ու իրենց վարքագծով բոլոր ազգերին ստիպեցին արդարացնել Աստծու կողմից տրված այդ տիտղոսը (45):*

*...Այսուհետև մենք ուրախությամբ որդեգրելու և կրելու ենք անունը, որ Տեր Աստված տվեց մեզ իր սեփական բերանով, և որով մենք ցանկանում ենք ծանաչվել ու կոչվել, այսպես ասած, «Եհովայի վկաներ» անունով... (46):*

Զգալով իրենց ասածի քիչ հավանական լինելը, «Եհովայի վկաները» փորձում են ապացույցներ բերել: Նրանք կրկին դիմում են.

- **Աբբա Կրամպոնին**

*«Այս անունը հազար անգամ հանդիպում ենք Կրամպոնի Աստվածաշնչում» (47):*

Նրանք մոռանում են ասել, որ

- այդ թարգմանությունը թվագրվում է 1905թ. (ՆԱԹ-ը՝ 1974-ին):
- Ծննդոց գրքի 2.4 համարի ծանոթագրության մեջ ասվում է. «նրա իսկական արտասանությունը Յահվեհ է»:
- 1923-ից սկսած՝ «Յահվեհ» եզրը տեքստում փոխարինել է «Եհովա»-ին:

\* Շարժման ղեկավար մարմնի անդամները (խմբ.):

Այսպիսով, Կրամպոնի՝ Աստծո անվան վերաբերյալ ավելի քան կեսդարյա կաթոլիկ թարգմանությունն ավելի ճիշտ է, քան ՆԱԹ-ինը<sup>Գ</sup>:

Ինչո՞ւ այդ դեպքում Ընկերության գրություններում դեռ 1972թ.-ից մենք կարդում ենք. «Ողորմելի կղերականությունը թշնամանք է տածում աստվածային անվան հանդեպ» (48):

- **Արքա Վիգուրո**

«Ճշմարտություն, որ առաջնորդում է հավիտենական կյանքի» գրքույկում (տպված ավելի քան 90 միլիոն տպաքանակով) (49), մենք կարող ենք կարդալ հետևյալ պնդումը. «Վիգուրոյի կաթոլիկ Աստվածաշնչյան բառարանը (1912, Յ. III, սյունակ 1220) Աստվածային Անվան մասին հայտնում է. «Եհովան Յին Կտակարանում Աստծու հատուկ անունն է» (50):

Իրոք, այս տողերը կարդալիս Դուք եզրակացնում եք, որ գիտակ կաթոլիկները կարծում են, որ «Եհովան» Աստծո հատուկ անունն է... Պարզապես, նրանք մոռանում են, որ քիչ հետո նույն հոդվածում, ճշտվում է, որ.

«Եհովա» կարդալը արհամարհական վերաբերմունք է արտահայտում (1224 սյունակ) ճշմարիտ արտասանության ձևը Յահվե է (1227 սյունակ)<sup>Դ</sup>:

- **Ոմն Յոհան Լադիսլավ Պիրկեի ստեղծագործությունը**

Ֆրանց Շուբերտի «Ամենակարողը» վերնագրով լիրիկական մի ստեղծագործություն... (Opus 79/2, DV 852, 1825), որի լիբրետտոն սկսվում է այսպես. «Մեծ է Տերը՝ Եհովան, որովհետև երկինքն ու երկիրն են պատմում նրա զորության մասին (51):

Եթե նման մի վկայություն փաստում է, որ Եհովան իսկապես Աստծո անունն է, ինչո՞ւ չմշել Շումանին, Լամարտինին, Յուզոյին և այլն, ովքեր, ինչպես նաև շատ ուրիշներ, նույնպես գործածել են Եհովա բառը...

- **Պլինուս քաղաքի զինանշաններին**

Մի այսպիսի լատիներեն դարձվածք կա՝ «Turris Fortissima Est Nomen Jehova» (Տիրոջ (Եհովայի) անունը ամուր պշտարակ է)... (տես Առակ 18.10): Այսպես «Եհովա» անունը հայտնվում է Պլինուս (Անգլիա) քաղաքի բոլոր ավտոբուսների վրա» (52): Առանց մեկնաբանության...

- **Սեն Մարտեն եկեղեցուն**

Շվեյցարիայի Օլտեն քաղաքի Սուրբ Մարտեն եկեղեցու առաստաղին գրված է Եհովա անունը (25):

Եթե Դուք կասկածում եք, Ձեզ նույնիսկ փոստային բացիկներ ցույց կտան...

Պետք է եզրակացնել, որ կամ

- «Եհովայի վկաների» կրոնը կաթոլիկության պատճենն է, կամ

- որ ճշմարիտ եկեղեցիները նրանք են, որոնց առաստաղին «Եհովա» է գրված:

## **«Եհովա» բառը պարունակում է Տետրագրամի բաղաձայները**

*Չրեաները... (JHWH) այս անունը պատվելով որպես սուրբ անուն, բարձրաձայն կարդալիս այն փոխարինում էին Ադոնայ (իմ Տեր) կամ Էլոհիմ (Աստված)-ով: Որպեսզի ընթերցողին հիշեցնեն, որ*

<sup>Գ</sup> Նշենք նաև, որ, այսպես ասած՝ «Երուսաղեմյան» կոչված թարգմանությունը նույնպես գործածում է «Յահվե» անունը:

<sup>Դ</sup> Դա ճշտելու համար կարիք չկա ուրիշ մասնագիտարան բառարաններ քրքրել, ինչպիսին Վիգուրոյի բառարանն է, ուր 12 էջ է հատկացված «Եհովա» անվան համար: Բավական է վերցնենք 1970թ. «Petit Larousse»-ը, որից մեջբերում ենք. «Յեհովա»-ն եբրայացիների կողմից Աստծուն տրված անվան սխալ արտասանությունն է (տես Յահվե):

պետք է արտասանել փոխարինված անունները, փոխարինված բառերի ծայնավորների նշանները դնում էին JHWH բաղաձայնների տակ: Այսպես ստացվել է «Եհովա» բառը, որ հրեաները համարում էին անբացատրելի (54):

Եբրայերենում աստվածային անվան ճիշտ արտասանությունը դարերի ընթացքում կորցրել են: Ուրեմն, ճիշտ չիմանալով, որ պետք է ծայնավորներ ավելացնել, նրան տվեցին Եհովա արտասանության ձևը՝ Տետրագրամայի տակ դնելով եբրայերեն Ադոնայ (Տեր) և Էլոհիմ (Աստված) բառերի ծայնավորների նշանները (55)<sup>բ</sup>:

Թեպետ այն համարվում է «հրեշավոր»՝ Եհովա անունը պարունակում է եբրայերեն Տետրագրամ-ի 4 հիմնական բաղաձայնները: Այդ բաղաձայնների միացությունը եբրայերեն Adonai (Տեր) բառի ծայնավորների հետ տալիս է Եհովա (56):

Ուրեմն «Եհովա» բառը «Աստված» սուրբ անվան բաղաձայնների և փոխառյալ եզրի ծայնավորների միագումարն է: Բերենք մի պարզ օրինակ, ցույց տալու համար, թե ինչ անհեթեթության կարելի է հանգել նման սկզբունքով առաջնորդվելու դեպքում:

Ենթադրենք ունենք մի տեքստ, ուր պատմվում է Bonneau (Բոննո) անունով մեկի պատմությունը: Եբրայերենի ձևով նշենք միայն բաղաձայնները՝ BNN: Երբ տեքստում հանդիպում ենք այս տառերին, երկնչելով արտասանել այս անունը, այն փոխարինում ենք մեկ այլ անունով, այն նույնացնելով նրա հետ. օրինակ՝ Ղազար: Ուրեմն, ամեն անգամ, երբ հանդիպենք BNN-ի, պիտի կարդանք՝ «Ղազար»:

Զնոռանալու համար այդ փոխառու բառը BNN-ի բաղաձայնների տակ գրում ենք Ղազար բառի ծայնավորները՝ **aae**<sup>ա</sup>:

• Տեղյակները գիտեն դրանց առկայության մասին երկու անուններում էլ և ընդգրկում են

- իսկական անվան՝ Bonneau-ի բոլոր բաղաձայնները, և
- փոխարինված Lazare-ի բոլոր ծայնավորները:

• Անտեղյակները, ովքեր չգիտեն այս ամենի պատմությունը, մտցնելով փոխառյալ բառի ծայնավորները իսկական բառի բաղաձայնների մեջ, այն կկարդան Banane...

• Պատմությանը տեղյակ անազնիվ մարդիկ, հետապնդելով մասնավոր շահ, բնական է, որ կպաշտպանեն այդ հիբրիդ անվան հնչողությունը:

Այո, այն իրական փաստը, որ «Եհովա» բառն իր մեջ պարունակում է Տետրագրամի 4 բաղաձայն, մի խղճուկ մխիթարություն է:

Մյուս կողմից, ի՞նչ են մտածում են «Եհովայի վկաները», երբ փոխարինում են Աստծո (JHWH) անունը, անդեմ այլ անունով (ինչպես Ադոնայը կամ Էլոհիմը դառնում է Տեր կամ Աստված):

Նրանք վարվում են ճիշտ այնպես, ինչպես Աստծո թշնամիները, այդ թվում՝ սատանան. ցանկանում են ջնջել աստվածային անունը: Այդպես վարվելով՝ նրանք վստահաբար Աստծուն չեն պատվում (57): Դա սրբապղծություն է (58):

**Այժմ լավ հիշեք.**  
**Եթե «Աստծո թշնամի» չլինեին, Տետրագրամի ընթերցանությունը չէին փոխարինի Ադոնայ-ով, և «Եհովա» բառը երբեք գոյություն չէր ունենա:**

Մտածե՞լ եք, որ Աստծո իսկական վկան ցանկանար կրել սխալմամբ ստեղծված, քանի դար արդեն այլափոխված այդ անունը, որով և «Եհովայի վկաները» իրենք իրենց մատնում են, որ չեն պատվում Աստծուն:

<sup>բ</sup> Այս հայտարարությունը կեղծ է, բացի այդ հակասում է հետևությանը: Տետրագրամի ծայնավորների միացումը «Elohim»-ին հանգեցրեց՝ «Jehovih» եզրի ծնունդին, որը քիչ հաջողություն ունեցավ: Տես «Աստծո անունը» բաժինը հաջորդ մասում:  
<sup>ա</sup> Ֆրանսերենում՝ Lazare անվան ծայնավորներն են **aae**:

## Արտասանությունը, արդյո՞ք այն կարևո՞ր է

*Աստվածային անվան արտասանության ձևը կարևոր չէ. լինի դա «Յահվե», «Եհովա» կամ լեզվին բնորոշ մեկ այլ արտասանության ձև (59):*

Մի՞թե դուք կցանկանայիք, որ Ձեր անունը կամովին աղավաղվեր: Դարեր շարունակ այս սխալ արտասանությունը ականա եղել է, ուրեմն՝ թույլատրելի է, բայց ինչո՞ւ համառորեն հետևել ամենուրեք այնքան քննադատված կաթոլիկ ավանդությանը<sup>f</sup>, այն դեպքում, երբ Ընկերության գրքերից մեկում կարդում ենք.

*ՆԱԹ-ի այս նոր թարգմանությունն ուզում է անբողոքյա՞նք հեռանալ քրիստոնեական կրոնական ավանդույթներից, որին իր հավատքը գերի էր դարձրել (61)<sup>g</sup>:*

Չե՞ն կարող ասել, թե ի՞նչ են ասում «Եհովայի վկաները» ՆԱԹ-ում որոշ թարգմանությունների մասին:

*Դրանք կամ անտրամաբանական են, կամ խառնել են կրոնական ավանդույթներ, կամ էլ այս աշխարհի փիլիսոփայությունը... (62)*

---

<sup>f</sup> Հիշենք, որ Ընկերության հայտարարությունների համաձայն՝ դա իսպանացի դոմինիկյան մի վանական էր, որ աստվածային անունը առաջին անգամ գրեց «Jehova» ձևով (60):

<sup>g</sup> «Եհովայի վկաներն» այստեղ «կրոնական ավանդույթը» համեմատում են Նոր Կտակարանի հետ: Ահա մեջբերման շարունակությունը. «Այնուհանդերձ, հակասաստվածաշնչական մոլորություն է անվանել «Նոր Կտակարան», այլ 27 ներշնչյալ քրիստոնեական գրություններ: Թեպետ այս անվանումը ճշտվում է Ս. Գրքով (Բ Կորնթ. 3. 14, Եբր. 8. 8-13, դա նույն հունարեն բառն է, որ նշանակում է «ուխտ» կամ «կտակարան» կամ ավելի ճիշտ՝ կտակի տնօրինություն: Շատ ցավալի է, որ «Եհովայի վկաները» զբաղվում են երկրորդական հարցերով, այն դեպքում երբ. իրենք գործածում են Ամենագոր Աստծու անվան սխալ մի ձև: Տեղին չէ՞ ասել. «Կույր առաջնորդներ, որ մտղուկը քամում եք և ուղտը կուլ եք տալիս» (Մատթ. 23. 24, ՆԱԹ):



## Աստծո Անունը

---

hwh  
y

(Տետրագրամը)

### Ի՞նչ է «Տետրագրամ»-ը

Եբրայացիներն իրենց գրավոր լեզվում օգտվում էին միայն բաղաձայններից, իսկ ձայնավորները մտապահում էին: Տետրագրամ է կոչվում եբրայական չորս բաղաձայնների միասնությունը, որ կազմում է Աստծո անունը՝ այնքան շատ գործածված Հին Կտակարանում: Այս անունը հայտնի է դարձրել Մովսեսը «Ելից» գրքի 3.13-15 համարներում: Այս 4 բաղաձայնները հնչյունաբանական նմանությամբ և բնույթով նման են լատիներեն YHWH տառերին, որի մեջ իրականում եբրայերենի հովտ-ը (y) համապատասխանում է Y-ին, վեվ-ը (w)՝ W-ին, իսկ հե-ն (h)՝ H-ին:

### Ամենագործածական անունը

Հին Կտակարանում Տետրագրամը օգտագործված է 6962 անգամ: Նշենք, որ երեք գրքերում՝ «Եսթեր», «Ժողովող», «Երգ երգոց»-ում՝ այն չի հանդիպում:

Մենք գտնում ենք Աստծո անվան նաև այլ հոմանիշներ, ինչպիսիք են.

- YAHWEH ELOHIM - Յահվե Էլոհիմ (42 անգամ)
- YAHWEH SABAOTH - Յահվե սաբավոթ (268)
- YAHWEH ADONAI - Յահվե Ադոնայ (5)
- ADONAI YAHWEH - Ադոնայ Յահվե (283)
- ADONAI - Ադոնայ (131)
- YAH - Յահ (26)
- EL - Էլ (229)
- ELOAH - Էլոահ (57)
- SCHADDAI - Շադդայ (48)<sup>a</sup>

«Եհովայի վկաները» երբեմն ասում են, որ Աստված միայն մեկ եզակի անուն չունի, և բերում են Հերոնիմոսի վկայությունը, որն իր Մարկելիոսի 25-րդ նամակում խոսում է Աստծո 10 անունների մասին. իններորդը Տետրագրամն է (63):

### Չարտասանվող Անունը

Խուսափելու համար հանդուգն ձևով Տետրագրամն արտասանելուց և (Ղևտաց. 24.16 և Ելից. 20.7) Օրենքի կողմից արգելքը խախտելուց, հրեաները շատ արագ դադարեցին այն արտասանել: Եվ այդ անունը փոխարինեցին համապատասխան հոմանիշ ածականներով, ինչպես «Սքանչելի», «Միակ», «Փառավոր և Ահավոր», «Թաքնված և Խորհրդակից», «Սուրբ, օրինյալ», ինչպես նաև հետևյալ անուններով.

- Ադոնայ (Տեր),

---

<sup>a</sup> Ըստ Ելից 34.14-ի «Եհովայի անունը Նախանձոտ է», որը Եհովայի վկաները ընդունում են (Դիտարան, 1981թ. թիվ 19, էջ 15):

- Էլոհիմ (Աստված), երբ անհրաժեշտ էր խուսափել Տետրագրամի հարադիր դրված Adonai բառի կրկնությունից՝ Ադոնայ, Ադոնայ:

Մյուս կողմից, Քրիստոսից առաջ VI դարում՝ Բաբելոնյան գերության ժամանակ, եբրայերենն իր տեղը զիջեց արամեերենին՝ այդ ժամանակաշրջանի միջազգային լեզվին:

## Սխալ արտասանություն

Վախենալով, որ եբրայերեն բոլոր Գրվածքներն արտասանությունն ընդմիջտ կորցրած Տետրագրամի բախտին կարժամանան, հրեա մի խումբ կրոնավորներ ձայնավոր նշանների մի համակարգ նշակեցին և արտագրեցին Հին Կտակարանը, որ կոչվեց Մասորական, որպեսզի տեքստը որոշակի դառնա և որ մեծ թվով մարդիկ կարողանան այն ինքնուրույն կարդալ:

Այդ աշխատանքը շատ դարեր տևեց (V-VIII դդ. Քրիստոսից հետո):

Այդ համակարգը կետ-գիծ նշանների մի ամբողջականություն էր, որ դնում էին բաղաձայնների տակ (որոշ դեպքերում էլ բաղաձայնների վրա կամ մեջտեղում)՝ միշտ հավատարիմ մնալով գրավոր տեքստին, որից բացարձակապես չէին ուզում ոչինչ փոխել: Այդ նույն մոտեցմամբ նրանք արտագրեցին Աստվածաշնչի ձեռագրերը՝ բառերի բաղաձայնների տակ դնելով ձայնավորների նշանները, որոնք համապատասխանում էին այդ բառին:

Այսպես.

- **aoa** Adonai-ի համար (**a d o n a i**) (**a o a**) և

- **eoī** Էլոհիմի համար (**e l o h i m**):

Ադոնայի ձայնավորների համար մենք պետք է երկու բան ճշտենք.

- Այս բառի վեջին i-ն եբրայերենում համարժեք է մի բաղաձայնի, որը բացակայում է Տետրագրամայից,

- ինչ վերաբերում է սկզբատառ a-ին, դա շատ կարճ մի a է, համարյա՝ համր e-ին համապատասխանող. նույն արմատի բառերում՝ այդ e-ն փոխարինվեց այդ կարճ a-ով և, դրվելով կոկորդային բաղաձայնի տակ, կարճ a-ն դարձավ e: Այսպիսով՝ Տետրագրամի տակ գրված երեք տառերը **eoā**-ն են:

Թվում է, թե այդ փոփոխության մասին մինչև 1100 թվականը մոռացել էին և սկսեցին կարդալ YHWH-ի բաղաձայնները կամ, ավելի շուտ, անունից եկող և JHVH-ը eoā և eoī ձայնավորների համաձայն ու ստացվեց Jehovah (Ժեհովա) կամ Jehovih (ժեհովի): Այս երկրորդ բառը մի քանի անգամ գործածվելուց հետո հաջողություն չունեցավ. նրան փոխարինեց *Եհովա* բառը: Սխալն ուղղվեց XIX դարի սկզբում Դրիվերի, Տերրիի և Ալֆրենկի աշխատանքների շնորհիվ:

Ահա «Եհովա» բառի ծագումը և այն սխալը, որ ծնունդ տվեց նրան:

## ԵԻՇ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք համաձայն ենք «Եհովայի վկաների» հետ այն բանում, որ ասում են, թե «եբրայական հին արտասանությունը» կորել է, և մեր օրերում կարելի է միայն ենթադրություններ անել (64):

Այո, այս բնագավառում այդ ամենը վարկած է թվում, բայց սեմական լեզուների մասնագետները ենթադրում են, որ այն «Yahweh» պետք է լինի<sup>Բ</sup>: Մյուս կողմից էլ գրության այդ ձևը, հետևաբար և՛ արտասանությունը, պահպանվել է Էպիֆանի և Թեոդորիտի մոտ<sup>Ը</sup>:

b Շատ եբրայագետներ նախընտրում են YAHAVEH գրության ձևը:

c Էպիֆան՝ վանական, այնուհետև եպիսկոպոս (Կիպրոս) 310-403թթ.: Թեոդորիտ - հույն աստվածաբան. Կարսի եպիսկոպոս (Հայաստան), մոտ՝ 393-458թթ. (հավանաբար հեղինակի այս հղումը շփոթության հետևանք է, քանի որ Թեոդորիտը եղել է Կյուրենիայի եպիսկոպոս և հայոց Կարսի հետ որևէ առնչություն չի ունեցել – խմբ.):

Վերջինս հայտարարում է, որ դա սամարացիների արտասանությունն է, ովքեր, իհարկե, չէին բաժանում ուղղափառ հրեաների չարտասանվող անվան արգելքը:

«Եհովայի վկաներն» իրենք էլ են ընդունում, որ «Յահ-վե» «ամենաճիշտ», «ամենամոտ» (65), «Եբրայերեն լեզվում աստվածային անվան ծագման սկզբնական ձևն է»(66):

## Տետրագրամի նշանակությունը

«Ելից» գրքի 3.14-15 համարները Աստծո անվան երեք ձև են տալիս մեզ.

- **Ես եմ, որ եմ** կամ

- **Ես եմ, որ է** կամ էլ

- **Ես եմ, որ «Ես եմ»** (բառացի թարգմանությունը)

- «**Ես եմ**»-ն է ինձ ուղարկել ձեզ մոտ

- YHVH...-ն ինձ ուղարկեց ձեզ մոտ, այս է իմ հավիտենական անունը:

Ամենայն հավանականությամբ այս Անունը առնչվում է «Գոյի» հետ. նա ուզում է ասել՝ «Նա է»: Իրոք.

- Տետրագրամը եբրայերենի *լիցել* բայի Kal ժամանակի անկատար ձևն է<sup>d</sup>. Վեվ-ը քիչ-քիչ փոխվել է հովտ<sup>e</sup>-ի՝ համաձայն լեզվի հետագա հիմնական զարգացման, և Տետրագրամը պահպանել է լեզվի հին-արխայիկ «Նա է» ձևը:

Նրա անվանական կազմության ձևը (եղանակային) III դեմքի անցյալ անկատար ժամանակով՝ որպես անուն կամ դերանուն, ընդունված էր եբրայերենում: Օրինակ՝ Չակոբ թարգմանվում է *նա խաբում է*, Իսահակ՝ *ծիծաղում է*, Նաթան՝ *նա տվեց*. այնպես որ, թարգմանիչները, հաշվի առնելով Տետրագրամի արտասանության անորոշությունը, այն թարգմանել են «Հավիտենական»-ով, որ գերազանցապես արտահայտում է տերմինի նշանակությունը, բայց միշտ չէ, որ տալիս է հատուկ անվան իմաստը<sup>e</sup>:

## Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Եվ, վերջապես, ինչո՞ւ են «Եհովայի վկաներն» այդքան պնդում ու ստիպում գործածել Աստծու անունը: Շատ պարզ պատճառով. նրանք չեն ճանաչում Աստծուն՝ որպես իրենց Հոր, ոչ էլ Քրիստոսին՝ որպես իրենց անձնական Փրկչի: Երեխան իր հորը չի դիմում ոչ անունով, ոչ էլ ազգանունով:

Աստվածաշունչն ասում է.

«Իսկ ովքեր նրան (Տեր Հիսուս Քրիստոսին) ընդունեցին, նրանց իշխանութիւն տուեց լինելու Աստծո որդիներ, նրանց, որոնք իր անուանը կը հաւատան» (*Հովհ. 1-12*):

«Տեսէք ինչպիսի սէր շնորհեց մեզ Հայրը, որպէսզի մենք կոչուենք Աստծու որդիներ...Սիրելիներ, այժմ Աստծու որդիներ ենք...» (*Ա Հովհ. 3.12*):

Ահա թե ինչու իսկական քրիստոնյան, երբ դիմում է Աստծուն՝ պատասխանում է և Տեր Հիսուսի պատվերին, որն ասում է. «Երբ աղոթում եք, ասացեք՝ Հայր մեր,...» (*Հովհ. 11.2*):

Այստեղից կարող ենք եզրակացնել.

«Ամեն ոք, ով առաջ է անցնում եւ չի մնում Քրիստոսի վարդապետութեան մէջ, չի ճանաչում Աստծուն» (*Բ Հովհ. 9*):

<sup>d</sup> Անցյալ անկատար ժամանակ:

<sup>e</sup> Վեվ-ը Տետրագրամի երրորդ տառն է, հովտը՝ առաջին:

<sup>e</sup> Նշենք, որ «Նա է» թարգմանությունը, որ համարվում է լավագույն թարգմանությունը, նրան դարձրել է ոչ այնքան լավ:

# ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ՏԵՏՐԱԳՐԱՄՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է ԱՐԴՅՈՔ

## Հունարեն քրիստոնեական ձեռագրերում, թե՞ ՆԱԹ-ում

ՆԱԹ-74-ի վերջում կարդում ենք.

*Ներկա թարգմանության մեջ (68), Դուք ամենուր կարող եք հանդիպել Եհովա անվանը՝ համաձայն հունական քրիստոնեական գրությունների:*

Ընդգծված բառերը ուշադիր ընթերցողի համար իրոք հայտնություն կլինեն, քանի որ *Եհովա* անունը գոյություն չունի հունարեն բնագրում, և այն թափանցել է այնտեղ ՆԱԹ-ի հրատարակիչների շնորհիվ: Այնուհանդերձ, տեսնենք, թե ինչ են ասում «Եհովայի վկաները»:

*Հիմնական կետերից մեկը, որ որոշակի խառնաշփոթ առաջացրեց ժամանակակից թարգմանիչների և քրիստոնյա հոգևորական առաջնորդների միջև, այն էր, որ այդ թարգմանությունը... 6.823 անգամ օգտագործվել է Հին եբրայերեն գրություններում, իր կողմից տրված Աստծու անունը... այդ նույն ձևով էլ ընդամենը 237 անգամ քրիստոնեական հունարեն գրություններում... «Բայց Դուք չեք կարող այդպես վարվել», - ասաց մի քննադատ, որի համար, որպեսզի ծանոթանար թարգմանությանը, կարդում էին թարգմանության ձեռագիր-օրինակը: Կոմիտեն 29 էջի իր նախաբանում նշում է, որ ինքն հիմնավոր պատճառներ ունի այդ անելու և անում է (69):*

Բայց «DD»-ի (1971) այդ ընթերցողն «հիմնավոր պատճառների» իրավունքը չունի: Մինչդեռ ներկայացնող գիտնականները 1951թ. այդ բանն արել էին «Equipé»-ում և 1967թ.՝ «TE»-ում... Բայց միայն 1978թ. օգոստոսի 1-ին Ընկերությունը «Դիտարանի» մի համարում այդ խնդրի շուրջ հրատարակեց մի հոդված՝ «Կրկին կապված Աստծո անվան հետ»<sup>a</sup> վերնագրով: Իսկ Տետրագրամի տառադարձությունը Նոր Կտակարանում ընդգրկելու հիմնավորումը շարադրվեց ՆԱԹ 50-ի անգլերեն հրատարակության երկար նախաբանում:

## «Եհովայի վկաները» կամայականորեն խառնում են «Տետրագրամ» և «Եհովա» բառերը

Օգտագործելով այս բառերը մեկը մյուսի փոխարեն՝ նրանք խառնաշփոթ են առաջացնում մարդկանց մեջ.

*Հրեա գրիչները, որոնք խուսափում էին անգամ «Եհովա» անունն արտասանել, իրենց թույլ տվեցին 134 տեղ այն փոխարինել Ադոնայ (Տեր) և 17 ուրիշ հատվածներում էլ էլոհիմ (Աստված) բառերով: Մասորական տեքստը տալիս է այդ փոփոխությունների ցանկը (70):*

*Եբրայերեն բնագիրը «Եհովա» անունը օգտագործել է 6.800 անգամ:*

*Ճիշտ է, Աստվածաշնչի շատ թարգմանություններ չեն օգտագործում «Եհովա» անունը (71): Բայց սա հիմք չի տալիս ենթադրելու, որ Աստվածաշնչի բնագրերում այդ անունը չկա գրված: Իրականում մոտ 7000 անգամ այն հանդիպում է (72):*

Այստեղից հետևում է.

- Որ հրեա դպիրները, որ ապրում էին Քրիստոսից առաջ, ծանոթ էին «Եհովա» բառին, բայց չէին օգտագործում,

- Որ «Եհովա» եզրը մոտ 7000 անգամ օգտագործվել է եբրայերեն, արամեերեն և հունարեն բնագրերում.

<sup>a</sup> 1980թ. մայիսի 1-ի Դիտարանի համարը նվիրված է այդ նյութին՝ «Աստված անուն ունի»:

Դա սուտ և միտումնավոր կեղծիք է:

- Ամեն դեպքում, խոսքը Տետրագրամի մասին է, և ոչ թե «Եհովա» բառի, որ գոյություն չունի:

- Տետրագրամը երբեք չի օգտագործվել ո՛չ հունարեն բնագրերում<sup>b</sup>, ո՛չ էլ Հին Կտակարանի արամեերեն գրված գրքերում (Եզրաս 4,8-6.18; 7.12-26; Երեմիա 10.11; Դանիել 2.4-7.28):

Նույն կամայական խառնաշփոթ ենք տեսնում վերջին հրատարակություններում: Որպեսզի ցույց տան, որ «Եհովան» միանգամայն «ամենահայտնի և ամենագործածական անունն է», նրանք ինը օրինակ են բերում (73):

Մենք պետք է նկատենք, որ

- «Եհովայի վկաներն» այս 9 օրինակները վերցրել են նրանցից, որոնց նրանք համարում են կեղծ կրոն:

- Դրանցից 6-ը չեն պարունակում «Եհովա» կեղծ տառադարձությունը, այլ Տետրագրամը՝ «Աստված» ձևով:

## ՀՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք չենք կարող չառաջարկել «Դիտարանի» 1977թ. 14 համարում լույս տեսած հոդվածը: Մյուս կողմից էլ մենք համաձայն ենք այն մտքի հետ, որ «ամբողջ գիրքը Աստծու շունչն է և օգտակար» (Բ Տիմ. 3.16):

*Աստվածաշնչի՝ վերջին տասնամյակում հայտնաբերված<sup>c</sup> ամենահին հունարեն տեքստը մեզ տանում է մ.թ. 150 թվականը՝ (Հովհաննես առաքյալի մահվանից ընդամենը 50 տարի անց՝ մ.թ. 100թ.): Հունարեն վերականգնված այս ձեռագրերը մեզ հավատի արժանի վստահություն են մերշնչում: Տեսեք ինչ եզրակացության է հանգում Ֆրեդերիկ Կենիոնը՝ Բրիտանական թանգարանի նախկին տնօրենը. «Բնագիր ձեռագրերի խմբագրումից մինչև ամենահին բնագիր ձեռագրերն ընկած ժամանակահատվածն այնքան փոքր է, որ վերջին հաշվով կասկած չի հարուցում տեքստի ամբողջականության վրա, որ հասել է մեզ և այսուհետ հաստատված է: Նոր Կտակարանի վավերականությունը համարվում է հաստատված»: Մինչդեռ հիմնականում ամբողջականությունը մի բան է, մանրամասների ճշտումը՝ մեկ այլ բան» (74):*

Բարեբախտաբար, բոլոր նրանց համար, ովքեր սիրում են «Աստվածաշունչը» Աստծու անունը մանրամասնություն չէ... Նույնիսկ «Եհովայի վկաներն» են ասում. «Աստծո անունը ամենակարևոր բանն է» (75): Այսպես, երբ Նոր Կտակարանի ձեռագրերում կարդում ենք «Kyrios» (Տեր)՝ Տետրագրամի կամ նրա տառադարձության փոխարեն, մտածում ենք, որ դա չէր կարող պատահականություն կամ զեղծում՝ նենգափոխում լինել, այլ որ Աստված այդպես է կամեցել:

Ինչպիսին եղավ մեր զարմանքն ու անհանգստությունը, երբ «Դիտարանի» մի համարում կարդացինք. «Երկրորդ դարի սկզբներում *Աստված* անվան հոմանիշները (հասկանալ՝ «Տեր» և «Աստված») կարողացան միանգամից փոխարինել երկու Կտակարաններում Տետրագրամին» (76):

Երկրորդ դարի սկիզբը համընկնում է Հովհաննես առաքյալի մահվան ժամանակին, և այստեղ կընդգծենք երկու բան.

- կամ մի քանի տարվա ընթացքում կարողացան եղծել Աստծու անունը, և մենք ոչ մի երաշխիք չունենք մեր ունեցած տեքստի ամբողջականության վերաբերյալ,

- կամ դա կեղծ հայտարարություն է, կամ փաստերի վրա չհիմնված ենթադրություն:

Ի՞նչ են ասում հունարեն բնագրերը. խոսքը տանք «Եհովայի վկաներին».

<sup>b</sup> Նոր Կտակարանում: Հին Կտակարանի հունարեն ձեռագրերը միայն թարգմանություններ են երբայերեն ոչ ներշնչյալ բնագրերի (*Նկատի ունի Հին Կտակարանի երկրորդականոն գրքերը – խմբ.*):

<sup>c</sup> Նաև տասնամյակներում:

«Չայտնի իրողություններից մեկը հին հունարեն բնագիր տեքստում և բազմաթիվ հին ու ժամանակակից մեկնություններում Աստծո անվան բացակայությունն է» (77):

## Ե Ն Թ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր ԵՎ Տ Ր Ա Մ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ըստ «Եհովայի վկաների», աստվածային անվան բացակայությունը հետևանք է բնագիր տեքստի փոփոխման:

Ինչի՞ վրա են նրանք հենվում նման մի վարկած առաջ քաշելու համար:

Նշենք դրանցից մի քանիսը.

- «Եթե քրիստոնյաներն որպես ժողովուրդ իրենց անվանն են պարտական, ինչո՞ւ Տետրագրամ-ում ներկայացված նրա այդ անունը պետք է հանվեր հունարեն քրիստոնեական տեքստերից» (78):

- Դոկտոր Ռեզելը գրում է հետևյալը. «Մինչև մեր դարաշրջանի 70-ական թվականները՝ երկրորդ Տաճարի ավերումը, Տետրագրամն արտասանվել է քահանայապետի կողմից (79):

- Օքսֆորդից Դոկտոր Պոլ-Քեյլը բացատրեց, որ այդ հատվածները «գուլգե մեզ են հասել Յոթանասնից թարգմանության երկրորդ Օրինացից» (80):

- «Չունարեն Աստվածաշնչի՝ հրեաների կողմից հրեաների համար արված բոլոր թարգմանությունները մինչև քրիստոնեության սկիզբը պետք է Աստծո անունը գործածելն երբայական Տետրագրամի ձևով...» (81):

- Այս հայտնագործությունները թույլ են տալիս մեզ համարյա որոշակի ձևով ասել. որ, աստվածային անունն իր կեղծ-վավերական kurios ձևով չէր գրվում նախաքրիստոնեական հունարեն Աստվածաշնչում...» (82)<sup>d</sup>:

- «Տրամաբանական է, որ «Նոր Կտակարանի» խմբագիրները աստվածաշնչային տեքստում, երբ մեջբերումներ էին անում գրություններից (83)<sup>e</sup>, հաստատ օգտագործում էին Տետրագրամը»:

- Այսպես, երբ այդ մեջբերումները աստվածային անուն էին պարունակում, Մատթեոսը հավանաբար ստիպված էր Տետրագրամ օգտագործել իր երբայերենով գրված Ավետարանում» (84):

- «Կարելի է կարծել, որ Մատթեոսն ինքն է հունարեն թարգմանել իր ավետարանը երբայերենից» (85):

- Ինչպես ասացինք վերևում, թվում է, թե «Նոր Կտակարանի մեջ...» II դարի սկզբներից սկսեցին փոխարինել աստվածային անունը (86):

Սիրելի ընթերցող, ինչպես դուք հասկացաք, նման ենթադրությունների և տրամաբանության հիման վրա էր, որ «Եհովայի վկաներ»-ն իրենց արտոնեցին «ուղղելու» աստվածաշնչյան ներշնչված գրքերը: Այսպես, ըստ նրանց, Նոր Կտակարանի բոլոր 15.000 ձեռագրերն էլ (որից 5.269-ը՝ հուն.) կեղծված են: Բայց մի՞թե Աստված, որ իր խոսքի պահպանն է (համեմատեք Երեմիա 1.12) չկարողացավ գեթ մի ստեղծված ձեռագիր պահպանել, որտեղ պարունակեր իր Անունը, և... հաշտվում էր 15.000 խեղաթյուրված օրինակների գոյության հետ: Հարց է ծագում, թե ինչպե՞ս կարող էր իրականապես կեղծումը, եթե հաշվի առնենք, որ գրիչներն ապրել են իրարից 1000-ավոր կմ-եր հեռու, հատկապես՝ բազմաթիվ դարերի ժամանակային տարբերությամբ և որ չեն խոսել միևնույն լեզվով և այլն:

## Երբայերենից հունարե՞ն

«Դիտարանի» մի համարում կարդում ենք (այս երկու պարբերություններն էլ հակասում են իրար).

d Նախաքրիստոնեական հունարեն գրություններ. խոսքը Չին Կտակարանի մասին է:  
e Նշենք այս արտահայտությունը. «Երբ հիշատակում են Ս. Գրությունները»:

Ֆուադի պապիրուսը 266-ը<sup>f</sup>, որ վերագրվում է մ.թ.ա. II կամ I դարերին, գրված է ոչ թե եբրայերեն, այլ հունարեն: Նայեք տառերին... Դուք կնկատեք, որ չնայած տեքստը հունարեն է, սակայն Տետրագրամը հանդես է գալիս եբրայերեն քառակուսի ձեռագրով:

1950 թ. առաջին անգամ հունարեն գրությունները (Նոր աշխարհի թարգմանություն-(ՆԱԹ)) - հրատարակեցին այդ հազվադեպ հատվածներից որոշ թվով ֆոտոպատճեններ: 50-60-ական թթ.-ի ընթացքում, հետազոտողների մեծ մասը չկարողացավ հավանություն տալ փաստաթղթերի վավերականությանը, և ոչ մի հնագիտական հրատարակություն չհրատարակեց ֆոտոպատճենները, ոչ էլ այդ տեքստերի ուսումնասիրությունը: Չարկ էր սպասել 1971թ.-ի՝ «Պապիրուսագիտության ուսումնասիրությունը» հատորին: Ի՞նչ տարօրինակ բան կար այդ տեքստերում: Ինչո՞ւմ էր կայանում Աստծո անվան գործածության սահմանումը (87):

Հենց սկզբից նշենք, որ այս վերջին պնդումը կեղծ է. նկատի ունենք 1950թ. հրատարակված մի գիրք<sup>g</sup> Օսկար Պարետի<sup>h</sup> գիրքը, որ վերարտադրում է Ֆուադի 266 պապիրուսը: Ավելին, այս աշխատությունը համեմատվում է 1944թ. Վ.Գ.Վադելի հրատարակած աշխատանքների հետ՝ «Տետրագրամը Յոթանասնիցում»<sup>i</sup>...

Ինչպե՞ս հասկանանք եբրայական Տետրագրամի հայտնվելը հունարեն Հին Կտակարանի մեջտեղում<sup>j</sup>:

Այդտեղ մենք ունենք մի ստույգ փաստ. «Աստված» անունը հրեա թարգմանիչները համարում են ամենասուրբ, և ուրեմն՝

- անընդօրինակելի
- անթարգմանելի:

Ինչպիսի՞ տրամաբանական դաս կարող ենք քաղել նման փաստից:

Վարվելով նույն կերպ և Հին Կտակարանի ֆրանսերեն թարգմանության մեջ պահելով եբրայերեն Տետրագրամը<sup>k</sup> չիմանալով եբրայերեն այս 4 տառերի արտասանությունը, հրեաների նման մենք ևս կդատապարտվենք հոմանիշ բառեր գործածելուն... Նկատենք, որ դա, ամեն դեպքում, ոչինչ չէր փոխի Նոր Կտակարանի մեջ, քանի որ հունարեն ոչ մի ձեռագիր Տետրագրամ չի գործածում:

Ի՞նչ դաս են քաղում այդտեղից «Եհովայի վկաները» (88).

- Որ Յոթանասունի բնագիրը (որը նույնպես թարգմանություն է) եբրայական Տետրագրամ է պարունակում,

- և ուրեմն՝ մարգարեները կարող էին օգտագործել Տետրագրամ-ը, որ կար տեքստերում:

- Որ Մատթեոսը, երբ գրում էր, պահպանեց այդ սովորույթը, հետո թարգմանեց իր ավետարանը:

- Եվ հետո լուծյամբ հասկանում ենք, որ Մարկոսը, Հովհաննեսը, Պողոսն ու Պետրոսը, Հակոբն ու Հուդան նույնն են արել:

- Արդյունքում ակներև է դառնում, որ հունական քրիստոնեական տեքստի սկզբնաղբյուրը փոխված է այն նույն ձևով, ինչ ձևով՝ Յոթանասունը:

Անկասկած ուշադիր ընթերցողը կզանազանի, բարեբախտաբար, ակնհայտը կեղծից:

Ինչպես գրում է մի մասնագետ. «Հմտության արտաքին քողի տակ ուշադիր քննությունը հայտնաբերում է կանխամտածված տեսակետների, տգիտության, ապաշնորհության իսկական մի գերեզմանոց, որ բռնադատում է աստվածաշնչյան քննադատության ամեն կանոն և մտածողական ցանկացած ամբողջական չափանիշ»<sup>l</sup>:

f Խոսքը Հին Կտակարանի ձեռագիր հունական թարգմանության մասին է. մենք միայն մի քանի հատված ունենք պահպանված:

g Խոսքը միայն երկրորդ հրատարակության մասին է:

h Շտուտգարդի Վիտենբերգի թարգարանի մատենապահ-տնօրեն:

i Աստվածաբանական ուսումնասիրությունների ամսագիր, XLV, 1944, 158-161:

j Անշուշտ չներշնչված թարգմանչին կամ թարգմանիչներին կարգադրված էր:

k Մենք ընթերցողին ենք ներկայացնում լատիներեն գրության թարգմանությունը՝ «Flavit hwhy dissipati sunt», այսինքն «Յահվեն փչեց, և նրանք ցրվեցին», Դիտարան, N 15, 1978թ. 1 օգոստոս, էջ 7:

l Ռեյ Ստեդման, «Քրիստոնեական հունարեն գրությունների ՆԱ թարգմանությունը», Our Hope, 50:34, հուլիս, 1953:

Այո, ինչ չպետք է աչքից վրիպի դա այն է, որ.

**Փոխելու համար Նոր Կտակարանի  
Ներշնչյալ տեքստը<sup>մ</sup>  
ելնում են  
չներշնչված հին թարգմանությունից<sup>ն</sup>**

Ավելին, Ֆուլադի 266 ձեռագիրը շատ հեռու է LXX բնագիր թարգմանությունից, ինչպես նաև առաքյալների գրած որոշ հունարեն գրություններից (89):

## ՆԱԹ-ի թույլ հենարանները

Արդարացնելու համար իրենց «ներշնչյալ» տեքստը՝ «Եհովայի վկաները» օրինակներ են բերում Նոր Կտակարանի թարգմանության մեջ Տետրագրամ ներմուծելու (կամ նրա տառադարձության) վերաբերյալ:

- Եբրայերենից բացի ուրիշ լեզուներ
  - Գերմաներեն (90)
  - Անգլերեն (91)
  - Եբրայերենից և անգլերենից բացի 38 ուրիշ լեզուներ (92)<sup>օ</sup>:  
Նշենք, որ
    - դրանք չներշնչված թարգմանություններ են, որոնք իրական հետաքրքրություն չեն ներկայացնում,
    - որ դրանք օգտագործում են Տետրագրամի տառադարձությունը միայն Հին Կտակարանից կատարված մեջբերումներում, և այն էլ ոչ միշտ (93):
- **Եբրայերեն լեզու**

*(ՆԱԹ հանձնախմբի անդամները) քննարկում են եբրայերեն 19 գրվածքներ հունարեն քրիստոնեական գրություններից, ուր կա Եհովայի անունը: Դրա հիման վրա էլ նրանք հաստատում են Աստծո անվան գոյությունը հունական ձեռագրերի շատ տեղերում (94):*

Մենք ստուգեցինք Դելիչի հրատարակությունը (նշված ՆԱԹ 50-ի 18-րդ էջում) և գտանք Տետրագրամի 195 կիրառում միայն (այն դեպքում, երբ ՆԱԹ-ում 237 է):

Ուրեմն պետք է ասել, որ ճշտելու համար Եհովա բառի մուտքը Նոր Կտակարան՝ ՆԱԹ-ի Կոմիտեն պետք է.

- փոփոխություններ մտցնել ներշնչյալ տեքստերի մեջ, սկսած հունարեն չներշնչյալ Նոր Կտակարանների տեքստերի եբրայերեն թարգմանություններից:

- համեմատել եբրայերեն Նոր Կտակարանի 19 տարբերակներ՝ արված հունարենից կամ լատիներենից, սկսած XIV դարից մինչև 18-րդ դարերը (95):

Այնուամենայնիվ չհասցնելով մինչև 237-ի, նրանք խոստովանում են.

<sup>մ</sup> Հաստատված 5.269 հունարեն ձեռագրերով

<sup>ն</sup> Տարբեր հատվածներ, որոնց վրա նրանք հենվում են 35 համարներն են՝ վերցված «Երկրորդումն օրինաց» 18, 20, 24, 25, 26, 27, 31, 32 գլուխներից:

<sup>օ</sup> Մենք պետք է նշենք նաև՝

- որ այդ օրինակները գտնելու համար Ընկերությունը հեռու չի գնում. բավական է հասնել 1864թ. գտնելու անգլերեն մի տարբերակ, 1796թ.՝ գերմաներեն, և աշխարհի տարբեր ծայրեր՝ գտնելու այդ հռչակավոր 38 լեզուները, որոնք հաստատ անձանոթ են մեր ընթերցողների մեծ մասին (նշենք անգլերեն՝ վստահ չլինելով այլ թարգմանությունների վրա). Choctaw, Hawaiian, Kiwai, Panaieti; Tahitian; Toaripi; Gilbert Island; New Britain; Wedau; Kipsigis; Mentawi; Manus Island; Nandi, Fang, Gabun, Magalasy, Narrinyeri, Kusaien, Naga (Lhota dialect), Naga (Angami dialect), Mortiock, Fiji, Zulu, Lla, Kongo, Bobangi, Dholuo, Mongo, Chokwe, Chuana, Luba, Lugbara, Munchi, Santo, Mohawk, Zande, Kuba (inkondo dialect), Lomwe.

- որ աշխարհում կա 5.000 լեզու կամ բարբառ, այնպես, որ նշված մի քանի դեպքերը շատ քիչ է:

- որ մի լեզվով կարող է բազմաթիվ մեկնություն լինել՝ մենք կարող ենք դրանցից հարյուրավորներ թվել, միայն ոչ ֆրանսերեն:



«Տրամաբանորեն հնարավոր է մենք առաջին անգամ ենք ամբողջ տեքստի մեջ 237 անգամ թարգմանում» (96):

## Երբ «Եհովայի վկաները» համագործակցում են «սատանայի ծառաների» հետ

Ով կարդացել է «Եհովայի վկաների» գրությունները, գիտի որ կրոնական առաջնորդները, հատկապես կաթոլիկ կղերականները կոչվում են «սատանայի ծառաներ», «նրա երկրային ներկայացուցիչներ», «սատանայի համագործակիցներ»...: «Պատմությունը վկայում է, որ հռոմեական նվիրապետությունը Աստվածաշնչի ոխերիմ թշնամին է» (97):

Հաշվի առնելով այս հայտարարությունները մենք չենք հասկանում, թե ինչու՞ են, այդ դեպքում, «Եհովայի վկաները» երևան հանում կաթոլիկ հոգևորականների աշխատանքները և վկայությունները.

- Եհովա տերմինի ներմուծումը Ղոմինիկյան քահանա Մարտինի կողմից (98).
- որ Եհովան Աստծու անուն է՝ ասել է Հայր Վիգուրո (99).
- Եհովա տերմինը Հին Կտակարանի մեջ ներմուծել է Հայր Կրամպոն (100).
- Տետրագրամը եբրայերեն Նոր Կտակարանի մեջ ներմուծել է Որոգինեսը՝

Վեցյունակում (101)<sup>բ</sup>.

- Եհովա տերմինը Ավետարանի մեջ երևում է Հայր Ժեսլեի գործից (102).
- Տետրագրամը ներմուծվել է եբրայերեն Նոր Կտակարանի մեջ կաթոլիկ Ջոնասի ջանքերով (103).

- ՆԱԹ-ի որոշ թարգմանություններ ճշտել են ճիզվիտներ Բովերը և Սերկը (104).

- ՆԱԹ-ի համար հիմք է ընդունել հունարեն տեքստը Վեսկոտտ Եպիսկոպոսը

(105)<sup>գ</sup>:

### Կարևոր դիտողություն

1978թ. օգոստոսի 1-ի «Դիտարանի» ուսումնասիրության մեջ գտնում ենք, որ ինչ գնով էլ լինի պետք է «վերականգնել» Աստծո անունը Հին Կտակարանի մեջբերումներում.

*Կարող ենք մտածել, որ համաձայն հրեական նախաքրիստոնեական սովորության Նոր Կտակարանի խմբագիրները Հին Կտակարանից մեջբերումներ անելիս Տետրագրամ են մտցրել (106):*

Այժմ մենք կտեսնենք, որ «Եհովայի վկաները» միայն այսքանով չբավարարվեցին...

## Երբ հունարեն տերմինը «Աստված» (Theos) է և ոչ «Տեր» (Kyrios)՝ ՆԱԹ-ը փոխարինում է այն «Եհովա»-յով

*Ժամանակակից թարգմանչին արտոնված է [հունարեն «Տեր» և «Աստված» բառերի համար] օգտագործել աստվածային անունն այնտեղ, ուր Սատթեսը և ուրիշներ՝ մեջ են բերում համարներ, պարբերություններ կամ արտահայտություններ՝ վերցված եբրայերեն ձեռագրերից կամ LXX՝-ից, որտեղ կա աստվածային անունը (107):*

<sup>բ</sup> Որոգինես (185-285), աստվածաբան և եկեղեցու հոգևոր հայրերից: V Տիեզերական ժողովի կողմից բանադրվել է: Սուրբ Գրքի քննական բնագրի՝ Վեցյունակի առաջին կազմողը:

<sup>գ</sup> Անգլիկան եկեղեցու Եպիսկոպոս: Անգլիկան եկեղեցին միջին դիրք է գրավում Կաթոլիկ և Բողոքական եկեղեցիների միջև:

<sup>դ</sup> LXX=Հին Կտակարանի հունարեն թարգմանություն՝ հայտնի Յոթանասնից անունով:

Մենք արդեն ասացինք, որ չենք կարող համաձայնել նման եզրակացության հետ, քանի որ Հին Կտակարանի ներշնչված թարգմանության մեջ Տետրագրամը վատ է թարգմանված և որ բնագիր «kyrios» և «theos» տերմինները փոխված և փոխարինված են եբրայական Տետրագրամի սխալ տառադարձությամբ:

**Այդպես վարվելով, նրանք հին տեքստն ավելի լավ վիճակի չեն հասցնում, այլ նենգափոխման են դատապարտում Նոր Կտակարանի բնագրերը:**

Նշենք մի քանի օրինակ այդ փոփոխություններից.

- Հին Կտակարանից արված մեջբերումներ. Սատթեսու 4.4, Հովհաննես 6.45...

- Մի պարզ համեմատություն Հին Կտակարանից (տես Գաղատ. 3.6, նույն հատվածը՝ Հակոբոս առաքյալի մոտ 2.23)

- Երբ խոսքը չի վերաբերում Հին Կտակարանին, օր.՝ Բ Պետրոս 3.12 (Ընկերության TE-ում մեջբերումների ցուցակում չի նշվում այն, էջ 341-345):

## **ՆԱԹ-ը երբ ցանկանում, այնտեղ «Եհովա» է դնում**

Բերենք մի քանի օրինակ.

### **• Կողոսացիներ 3.22-4.1**

Բնագրում նույն տերմինը «kyrios» (Տեր), կրկնվում է 7 անգամ: Եվ, քանի որ խոսքը չի վերաբերում Հին Կտակարանի մեջբերմանը, ՆԱԹ-ն այս բառը 3 անգամ «Եհովա» է թարգմանում, իսկ երբ խոսքը Քրիստոսի մասին է, թարգմանում է *Ուսուցիչ...*

### **• Ա Թեսաղոնիկեցիներ 4.15-17**

Այստեղ մենք ունենք «kyrios» բառի 5 գործածություն, 2 անգամ՝ առանց հոդի: առաջինի դեպքում ՆԱԹ-ն այն թարգմանում է «Եհովա» (15), երկրորդում՝ Տեր (17):

### **• Գործք 14.23**

ՆԱԹ 63-ի թարգմանության մեջ.

«Նրանց հանձնեցին Եհովային, որին հավատացել էին»:

ՆԱԹ 74 հրատարակության մեջ.

«... որին սկսել էին հավատալ»:

Ինչքան շատ է «Եհովա» տերմինը թափանցում տեքստ, այնքան աղավաղված թարգմանություն է ստացվում:

ՆԱԹ-ը այդտեղ ենթադրում է անցյալ կատարյալ բայածև՝ սկսնական բայածևից, մինչդեռ հունարենն ունի շեշտված անցյալ կատարյալ բայածև, որն այլ լեզուներում չկա, ինչպես ֆրանսերենում: Կարող էին փոխարինել «նրանք գնալով ավելանում էին», կամ «վերջնականապես աճեցին» և այլն:

Բացի դրանից, նշենք, որ թարգմանչական հանձնաժողովը հաշվի չի առնում բնագիրը... Ովքե՞ր էին այդ հավատացյալները և ի՞նչ պատգամ էին ստացել: Բնագիրը պատասխանում է.

Նրանց մեջ կային հրեաներ (13,14 և 43, 14.1) և նրանց մասին չէին կարող ասել. «նրանք սկսել էին հավատալ ԿԻՄՄ-ին»:

- Նրանց սկսեցին Հիսուս քարոզել (13.23-37 և հատկապես՝ 38-39):

Մենք դեռ կարող ենք պնդել, որ «Աստված» (ԿԻՄՄ) երբեք ոչ ոքի չի փրկել (Հակոբոս 2.19), իսկ փրկությունը Հիսուս Քրիստոսին հավատալով է (Հովհ. 3.36, Գործք 16.31...)

### **• Գործք 19.20**

ՆԱԹ-ը թարգմանել է. «Եհովայի խոսքը աճում էր ու զորանում», բայց բնագիրը պարզ ցույց է տալիս, որ խոսքը Տեր Հիսուսի մասին է՝ (13 և 15 համարներ) և հենց Տիրոջ (Հիսուսի) անունն է, որ շարունակում է փառավորվել (17):

## ՆԱԹ-ը «Եհովա» չի օգտագործում երբ դա իրեն խանգարում է

Հիշենք թե ինչի՞ հիման վրա հանձնաժողովը ՆԱԹ պատրաստեց:

*Ինչպես կարող է ժամանակակից թարգմանիչն իմանալ կամ որոշել, թե երբ պետք է փոխարինի հունարեն *kyrios* և *theos* տերմիններն Աստծու անվամբ. ելնելով եբրայերեն տեքստերից և որոշելով որտեղ են մեջբերել ներշնչյալ քրիստոնյա հեղինակները: Այդ դեպքում նա անդրադառնում է բնագրին՝ որոշելու համար, թե Աստծու անունը այդտեղ երևո՞ւմ է: Այդ ձևով նա որոշում է *kyrios* և *theos* բառերի նույնությունը և կարողանում վեր հանել դրանց ինքնությունը (108):*

Բերենք 2 օրինակ այդ չկիրարկվող օրենքից.

- **Եբրայեցիներին 1.10 (ՆԱԹ)**

*«Դու ես սկիզբը, ով Տեր, որ երկրի հիմքերը դրիր, և երկինքը քո ձեռքերի գործն է»:*

Այստեղ մենք մի պարզ մեջբերում անենք 102-րդ սաղմոսից՝ «Եհովայի վկաների» կողմից շատ հայտնի (109).

ՆԱԹ-ն այստեղ բացառություն է անում իր որդեգրած օրենքից: Ինչու՞: Դա շատ պարզ է: Եթե նա օգտագործեր «Եհովա» անունը, դրանով նա ցույց կտար, որ Հիսուսը Հին Կտակարանի ԿՀՄԿ-ի տեսանելի հայտնությունն է: Արարիչն այս համարում հանդես է գալիս Աստծո Հոգով Որդու միջոցով, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի (Եբր. 1.8):

- **Ա Պետրոս 3.15**

Այստեղ Եսայիից արված մեջբերումն է (Եսայի 8.12-13): Դարբեի թարգմանությունը հղում է դնում այստեղ՝ ցույց տալու համար, թե «Տեր» բառը համապատասխանում է Հին Կտակարանի «Հավիտենականին» (Եհովային): ՆԱԹ-ը փոխարենն օգտագործում է «Տեր», ինչու՞: Որովհետև հակառակ դեպքում Քրիստոսը պարզ ձևով ԿՀՄԿ-ի հետ կնույնանա:

Մենք հասկանում ենք, որ նրանք կարող էին նման աղավաղումով գրել:

*Հենց սկզբից (Դիտարանը) հաստատում է Աստվածաշնչի հիմնական ճշմարտությունները: Օրինակ. 1882թ. օգոստոսի համարում հաստատում է. «Վստահությամբ կարող ենք հաստատել, որ Ա. գրվածքներում Եհովա անունը համապատասխանում է միայն Հայր Աստծուն» (110):*

## Եզրակացություն

Նախորդ դիտողությունները համարյա անհնար են դարձնում և դժվարացնում (Հին Կտակարանի մեջբերումներից) հասկանալ, թե «*kyrios*»՝ Տեր բառը Հին Կտակարանի ԿՀՄԿ-ին է՞ վերաբերում, թե՞ մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Մենք հավատում ենք, որ դա Աստծո կամքն է մեզ ցույց տալու Տեր Հիսուսի խոսքը. «Ես և հայրը մի ենք»: Այսպես, երբ առաջին դարերի քրիստոնյաները լսում էին աստվածաշնչային ընթերցումները, նրանք լսում էին միայն «*kyrios*», որ Հին Կտակարանի ԿՀՄԿ-ն է կամ Տեր Հիսուս Քրիստոսը: Այդտեղ հարկ կա՞ խորը մտածելու: Նշենք նույնպես, որ Հովհաննեսի գրություններից երբեմն անհնար է իմանալ, առաքյալը Որդո՞ւ, թե՞ Հոր մասին է խոսում<sup>s</sup>: Այդտեղ Հին Կտակարանի անդրադարձն է, երբ ասում է. «Սկզբում Աստված (բնագրում՝ *elohim*-հոգն. թվով) ստեղծեց (բայը եզակի թվով) երկինքն ու երկիրը»:

Երբ մեր միտքը սայթաքում և կանգ է առնում, հավատը շարունակում է և հիանալի կերպով հասնում Աստծո հայտնությանը:

<sup>s</sup> Օրինակի համար ուշադիր կարդացեք Ա Հովհ. 2.28 և Ա Հովհ. 3.3 համարները:

# Չորրորդ մաս

---

## ԱՂԱՎԱՂՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

- **Բնագրերից սկսած**
  - Հիմքը՝ հունարեն տեքստը
  - Տարբերակների օգտագործում
  
- **Թարգմանության միջոցով**
  - Ավելացրած բառեր
  - Դուրս նետած բառեր
  - Փոխարինված բառեր
  - Այլ կերպ թարգմանված բառեր
  - Դիտավորյալ վատ թարգմանած բառեր
  - Աղավաղված նախադասություններ
  - Դիտավորյալ փոխված դարձվածքներ
  - Այլաբանություններ
  - Բայական ժամանակների փոփոխություններ
  - Տպագրական հնարքներ
  - Վերջաբան
  - Եզրակացություն

## Բնագրերից սկսած

### Հիմքը՝ հունարեն տեքստը

ՆԱԹ հանձնաժողովը ներկայացնում է հունարեն քրիստոնեական Գրություններից կատարած իր թարգմանությունը:

*...Բոլորովին նոր այս թարգմանությունը, հունարեն բնագրից (111)՝ հաստատված է երկու համաշխարհային հռչակ վայելող անգլիացի գիտնականների՝ Վեսկոտտի և Յորտի կողմից, որպես որակյալ: ՆԱԹ-ի հունարեն գրությունների վրա հիմնված այս գերազանց հունարեն տեքստը նույն ձևով հավատարմորեն փոխանցում է «Եհովայի խոսքը» իր ընթերցողներին... (112):*

*Հունարեն արժեքավոր 1881-ին հրատարակված տեքստը համարյա միաձայն ընդունվում է Քենթրիջի Համալսարանի մեկնաբանների, եպիսկոպոս Բ. Ֆ. Վեսկոտտի և պրոֆ. Ֆ. Ժ. Ա. Յորտի կողմից: Այդ տեքստն է հիմք ծառայել ՆԱԹ-ի՝ 1950 և 1961 թվականների հունարեն քրիստոնեական գրությունների թարգմանության համար՝ ապահովելով մեծ ճշգրտություն (113):*

Մենք այդ տեքստն ընդունելի ենք համարում, և թեպետ վերջին 100 տարվա ընթացքում ավելի լավ աշխատանք չի նշվում, բայց մենք ցույց կտանք, որ ՆԱԹ հետևել է Վեսկոտտի և Յորտի այդ «Գերազանց տեքստին», այնքանով, որքանով վերջինս համահունչ է իր կանխակալ գաղափարներին, եթե ոչ, նա այն մի կողմ կնետեր, կամ կաղավաղեր տեքստը:

### Տարբերակների օգտագործում

Մինչև ՆԱԹ-ի ֆրանսերեն լեզվով լույս տեսնելը, «Եհովայի վկաները» նշում էին ամեն տեսակի թարգմանություն (թվով 11 թարգմանություն՝ «Թող Աստված լինի ճշմարիտ» գրքում):

Որոշ մարդիկ կարծում էին, որ Ընկերությունը դրանով ցույց է տալիս.

- իր լայն մտահորիզոնը.
- բոլոր թարգմանությունների վերաբերյալ իր համաձայնությունը.
- բնագրից լավագույն թարգմանություն գտնելու իր մտահոգությունը:

Բայց յուրաքանչյուր գրագետ ընթերցող գլխի կընկնի, որ այդ հնարքը կեղծիք է: Մեր ուսումնասիրության այս կետում, կարող ենք հաստատել, որ Ընկերությունը խաբում է ընթերցողին՝ շատ հաճախ տալով համատեքստից դուրս համարների թարգմանություն, որ լավագույն ձևով համապատասխանում է իր ցանկացած փաստելուն: Ինչպես մեկն է ասել. «Ընկերությունը չի պաշտպանում այն, ինչ ասում է Աստվածաշունչը, բայց Աստվածաշունչը պետք է պաշտպանի այն, ինչ նա՝ Ընկերությունն է ասում»:

«Եհովայի վկաների դերը Աստծու կամքի մեջ» գրքի 257-րդ էջում մենք կարդում ենք, որ տարբեր թարգմանություններն ուղղակի արատավոր են. «մենք շարունակելու ենք դրանք օգտագործել հարմար ձևով», ուստի, ինքնաստիճյան հասկացվում է, որ «Եհովայի վկաները» շարունակելու են դրանք օգտագործել՝ ծառայեցնելով իրենց նպատակներին:

ՆԱԹ-ում մեզ բազմաթիվ կեղծիքներ են սպասում՝ սպրդած այդ «թարգմանության» մեջ. մտքերի ծուռ անդրադարձումներ, որ հատուկ է Ընկերությանը (տես «ՆԱԹ-ը ներդաշնակ է ներշնչյալ տեքստերին» բաժինը): Չկարողանալով այլևս խաղալ տեքստերի հետ, Ընկերությունը պնդում է.

- Չնայած հունարեն տեքստն ընդունելի է համարվում, այժմ հեղինակություն չի վայելում: Եթե հավատանք TE-ի 314 էջի աղյուսակին, ապա այնտեղ նշված 44 տարբերակներից միայն անգլերեն 6 տարբերակի (և ոչ մի ֆրանսերեն) տեքստի վրա է հենվում:

- ՆԱԹ-ը գործածել է բազմաթիվ բնագրեր, թարգմանություններ (հունարեն և լատիներեն)՝ «հետապնդելով միայն մեկ նպատակ՝ ներկայացնել ճշգրիտ անգլերեն տեքստը» (114):

Վերոհիշյալի առաջին մասը ճիշտ է, բայց կասկածում ենք երկրորդ մասի վրա: Մենք չենք կարող այստեղ վերլուծել նույն մեջբերումների գործածությունը, որ ՆԱԹ-ը տալիս է տարբեր թարգմանություններում, բայց TE-ի 298-311 էջերում բերված են գործածության բազմաթիվ խելացի օրինակներ՝ տարբեր աղբյուրներից քաղված:

## Թարգմանության միջոցով

Մոտիկից ուսումնասիրելով ՆԱԹ-ը, գալիս ենք հետևյալ եզրակացության.

- Շատ տեղերում այն ճիշտ և բառացի է, երբ այդ հատվածները վարդապետական արժեք չեն ներկայացնում:

- Աղավաղված և կեղծ են այն հատվածներում, որոնք վերաբերում են Քրիստոնեական հավատի բանալի համարներին. Քրիստոսի աստվածությանը<sup>a</sup>, հավատով փրկության և այլն:

Մենք Ձեզ խնդրում ենք չասել, թե՝ «*Չեղինակը Ս. Երրորդությունը դավանող խեղճ մեկն է կամ բարեկական հեթանոս հերետիկոս*» կամ՝ «*Մնացած Գրություններն հակառակն են ասում*»: Մենք չենք կարող այս ուսումնասիրության շրջանակներում՝

- նշել բոլոր համարները, որոնք ՆԱԹ-ը նենգափոխում է.

- բնագրի հիման վրա տալ ուսումնասիրության բոլոր մանրամասները, բայց Ձեզ կտանք բավականին անժխտելի գիտելիքներ, որ համոզվեք կատարված խարդախության մեջ: Եթե Ընկերությունն ընդունակ է փոփոխելու Աստծո խոսքը, նա դրանով փաստում է իր ծագումը: Նաև վստահ եղեք, որ այդ գրությունների մնացած մասը նույնպես այդ բնույթի են: Մեզ հետ կարող եք ազատ խորհրդակցել բոլոր կետերի վերաբերյալ:

## Ավելացրած բառեր

ՆԱԹ-ի ներածությունում կարող ենք կարդալ.

*Փակագծերի մեջ դրվում են բառեր՝ ֆրանսերեն նախադասությունն ավելի պարզ կամ ավելի ճիշտ դարձնելու համար (115):*

*Չամապատասխանաբար, երբ հարկ է լինում պարզություն կամ հստակություն հաղորդել թարգմանությանը, ավելացվում են որոշ բառեր, որոնք համապատասխանում են համատեքստին՝ այդ ներմուծումը դնելով փակագծերի մեջ (116):*

Ընդհանրապես բոլոր թարգմանությունները երբեմն ստիպված դիմել են այդ միջոցին, որպեսզի նախադասությունը հասկանալի դարձնեն, ուստի մենք չենք նշի այն բառերը, որ ավելացնում են տեքստը հասկանալու համար, այլ միայն նրանք, որ փոխում են իմաստը:

### • **Հռոմեացիներին 9.5**

«...*Քրիստոս, որ ամեն բանի վրա հավիտյանս օրհնյալ Աստված է, Ամեն*»: Դարձել է «... (որոնցից) Քրիստոս (եկավ) մարմնի կողմից. Աստված բոլորի վրա, օրհնյալ (լինի) հավիտյանս. Ամեն»:

Քրիստոսի աստվածության աներկբայելի հայտարարությունը այստեղ վերածվում է լոկ փառաբանության: Ուստի փոխելու համար այս տեքստը, ՆԱԹ-ն աշխատում է մեջտեղից վերացնել այդ իմաստը՝ հղելով հունարենին և ավելացնում է «լինել» բայն այս թարգմանության մեջ:

Այստեղ, նախադասության առաջին մասն հավաստի է: Բառացի՝ «որոնցից է Քրիստոս մարմնի կողմից»: Բայց այս բայի մակբայական ներկան հետևում է անմիջապես և նախորդում է հունարեն որոշյալ հոդին (ho on), որը ներկայացնում է «Աստված» (theos) բառի հատկանիշը, որը կապված է Քրիստոսի հետ: Իրականում հունարենում ունենք. «Նա է բոլորի վրա (ավելի ճիշտ՝ բոլոր բաների) Աստված Օրհնյալ հավիտյանս: Ամեն»:

<sup>a</sup> Ֆրանսերենում «deite» տեմինը ձգտում է վերանալ գործածական բառարանից: Որոշ բառարաններ այն ներմուծել են «divinité mythologique» դիցաբանական աստվածություն» իմաստով, թեև նրա ծագումաբանությունը պարզ է (տես սույն գրքի «Դիտավորյալ վատ թարգմանած» բաժինը): Լիտերի 7 հատորանոց բառարանում (1956-57թթ.) տրվում է առաջին իմաստը՝ աստվածային գոյություն, ֆրանսիացի Քիլեի հայտնի բառարանը (1975թ. 4 հատորով) նույն սահմանումն է տալիս: Այդ իմաստով էլ մենք օգտագործում ենք այդ տեմինը:

Սա կարդացվում է այսպես. «Նա ով Աստված է»՝ «Օրհնյալը» վերաբերում է իրեն. իսկ հրեայի համար, որոնք խիստ միաստվածության դավանողներ են, այդ «Օրհնյալը» Աստծու անուններից մեկն է (Մարկ. 14.61):

Նրանք կիրառում են անեն հնար՝ անգամ կետադրություն, որը չկա բնագրում: Նրանք հրաժարվում են անգամ Վեստկոտտի տեքստերից, որը «մարմնի կողմից»-ից հետո ստորակետ ունի և այն փոխարինում են միջակետով:

• **Կողոսացիներին 1.16-20**

Այստեղ 5 անգամ հանդիպում ենք «ամեն բան» արտահայտությանը: Օրինակ, համար 16-ում. «Ամեն բան ստեղծվեց նրանով և նրա համար». Նոր Աշխարհի թարգմանության մեջ այդ հատվածը դարձել է. «Ամեն բան ստեղծվեց նրա օգնությամբ և նրա համար»:

Հունարենում քանակական ածականը կամ անորոշ դերբայը, մակբայը՝ կիրառվելով գոյականակերպ չեզոք սեռով, նշանակում են առարկաներ և երբեմն էլ՝ կենդանի արարածներ<sup>b</sup>:

16-րդ և 20-րդ համարներում հունարեն «ta panta» (բառացի՝ ամեն բան և գոյացություններ) հոգնակի չեզոք սեռում նշանակում է ամեն գոյացություն՝ անցյալում և գոյ է ներկայում՝ մատերիան, կյանքը (բացառությամբ նրան, ով ստեղծել է): Շարունակությունը ճշտում է. «Նրանք, որ երևում են և նրանք, որ չեն երևում», այդ թվում՝ հրեշտակների նվիրապետություն, աթոռներ, տերություններ, պետություններ, իշխանություններ:

Այդ համարներում հանդիպում ենք ՆԱԹ-ում կրկնակի աղավաղման.

- հանված է հունարենի հոդը՝ ta.

- փակագծերում ավելացված է անորոշ ածական՝ ուրիշ, այլ, որը նախորդում է որոշյալ հոդին:

Եբր. 2.10-ում հունարեն արտահայտությունը նույնն է. «ամեն բան»՝ օտագործված երկու անգամ՝ ընդգծելու համար Աստծու գերիշխանությունը ամբողջ արարչության վրա. այդտեղ թարգմանչական Հանձնաժողովը չի ավելացնում «ուրիշ»... Ինչո՞ւ: Որովհետև դա չի արվում Որդուն Հոր համեմատ ցածր դասելու համար, քանի որ այդպես է ասվում տեքստում, իսկ Հայրը ցանկանում է, որ արդարացի կերպով պատվեն Որդուն, այնպես, ինչպես պատվում են Հորը»: Եվ հետևաբար. «Ով Որդուն չի պատվում, չի պատվում և Հորը՝ նրան առաքողին» (Հովհ. 5.23):

Միևնույն «այլ» տերմինի հավելումը կա նաև՝ Փիլիպեցիներ 2.9 և Հովհաննու 10.29-ում՝ չնայած բառերը փակագծերի մեջ չեն:

• **Գաղատացիներին 6.18**

«Եղբայրներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը թող ձեր հոգու հետ լինի: Ամեն»: Այս համարը ՆԱԹ-ն դարձրել է. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը ձեր հոգիների հետ, նրանց, որ ձեզ եղբայր են համարում: Ամեն»:

«որոնք ձեզ համարում են» արտահայտություն հունարեն բնագրում չկա: Ավելացնենք, որ փակագծեր էլ մոռացել են դնել:

• **2 Պետրոս 1.1-5**

«Մեր Աստծու և փրկչի՝ Հիսուս Քրիստոսի արդարությունով» համարը ՆԱԹ-ում դարձել է. «Մեր Աստծու արդարությունով և Փրկիչ Տեր Հիսուս Քրիստոսով(ը)»<sup>c</sup>:

Այստեղ մենք գտնում ենք բացահայտ մի աղավաղում. հունարեն սեռական հոլովի չկրկնվող հոդը դրված է երկու՝ «Աստված և Փրկիչ» բառերից առաջ և ցույց է տալիս, որ վերաբերում է միայն մեկ անձի: «Եհովայի վկաները», մերժելով Քրիստոսի աստվածությունը, համարձակվում են փոխել բնագիրը, որպեսզի վերջինս համահունչ լինի իրենց վարդապետությանը:

Ի՞նչ արժեն ուրեմն այն կրկնվող գովազդները, որ գտնում ենք «Վրթնացեք»-ի և «Դիտարան»-ի վերջին էջում:

<sup>b</sup> Տես Հայտն. 4.6 և Ղուկաս 1.35:

<sup>c</sup> Հարկ է նշել, որ որոշ լուրջ թարգմանիչներ դժբախտաբար այս ձևով են թարգմանել:

«Ուզում ե՞ք հասկանալ Աստծո խոսքը: Ձեզ շատ կօգնի Աստվածաշնչի մի լավ թարգմանություն: ՆԱԹ-ը (Նոր Աշխարհի թարգմանությունը) սուրբ գրությունները հավատարմորեն և ճշգրիտ վերարտադրում է Աստծո խոսքը» (117):

## Դուրս նետած բառեր

- **Ջաբարիա 12.10**

«... նրանք պիտի նայեն ինձ, ում խոցեցին...» ՆԱԹ-ը դարձրել է. «նրանք նայելու են. ում խոցեցին...»: «elai»=«ինձ» բառը հանված է:

- **Կողոսացիներ 1.16**

Բնագիր «ta panta» արտահայտության հոդը ՆԱԹ-ը դուրս է գցել, որն անհրաժեշտ է գոյացությունների և առարկաների բացարձակ ամբողջականությունն ցույց տալու համար (տես նախորդ՝ «Ավելացրած բառեր» բաժինը):

- **Կողոսացիներ 1.19**

«Որպեսզի ամբողջ հաճությունը բնակվի նրա մեջ»-ը դարձել է. «Որովհետև [Աստվածն] հարմար գտավ, որ ամբողջ հաճությունը բնակվի նրա մեջ»:

Հունարեն որոշյալ հոդը ջնջել-հանել են «հաճություն»-ից և ստիպված ավելացրել են փակագծերում դրված «Աստված» բառի վրա, որպեսզի բնագրում առաջին բայը ենթակա ունենա:

Այս ամբողջ *մեքենայությունների* նպատակը ժխտելու փորձեր են, որ հանկարծ «հաճությունը» (այսինքն՝ Աստված) չբնակվի Քրիստոս մարդու մեջ:

Այս բաները լավագույնս գտնում ենք Ընկերության կողմից հրատարակված այլ գրքերում ևս: Միայն մեկ օրինակ. Թովմասի աններելի սխալը, որ ասում է հարություն առած Հիսուսին. «Տեր իմ և Աստված իմ» (Հովհ. 20.28 ՆԱԹ) 1970թ. «Բյուլետենում» սրբագրվել է այսպես (118). նա միայն բացականչում է. «Իմ Տերս»: Այսպես ավելի լավ չէ՞:

- **Բ Կորնթացիներ 5.19**

Բառացիորեն ունենք՝ «...Աստված էր, որ Քրիստոսով (հունարենում Theos èn èn Christo) աշխարհը հաշտեցրեց իր հետ...»: ՆԱԹ-ը դարձրել է. «Քրիստոսի միջոցով Աստված հաշտեցրեց...»:

Հանել են «էր» բայը՝ թաքցնելու համար աստվածությունը նրա՝ ով Աստված է:

## Փոխարինված բառեր

- **Մատթեոս 26.26**

«Առեք, կերեք, այս է իմ մարմինը»:

«Այս է իմ մարմինը» փոխարինված է «այս նշանակում է իմ մարմինը» (ՆԱԹ 74): Բայը փոխարինված է: Թող որ «լինել» բայի իմաստը փաստացի «ներկայացնել», «նշանակել» լինի: Դա ուրիշ հարց է: Հավատարիմ թարգմանիչը չպետք է թարգմանելիս իր գաղափարներով կողմնորոշվի, այլ ներկայացնի այն, ինչ ասում է բնագիրը:

- **Հովհ. 5.20**

Հունարենում բառացի ունենք. «... Հիսուս Քրիստոսը՝ որը (ավելի ճիշտ՝ որը է) ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը...»: Իսկ ՆԱԹ 63-ը գրում է. «... Հիսուս Քրիստոս: Նա է իսկական Աստվածը և հավիտենական կյանքը...» և ՆԱԹ 74՝ «... Հիսուս Քրիստոս. Ահա իսկական Աստվածը և հավիտենական կյանքը...»:

Հունարեն «houtos»-ը՝ ցուցական դերանունը փոխարինված է «ահա» անորոշ ձևով, որը բացահայտ կերպով չի ներկայացնում նախորդ երկու բառերին՝ Հիսուս Քրիստոսին:



## Այլ կերպ թարգմանված բառեր

Նշենք, որ հետևյալ օրինակներում ոչ մի դժվարություն չկար բնագրի բառը փոխարինել համապատասխան նույն բառով՝ այն ինչ անում են բոլոր լուրջ թարգմանիչները:

- **«Pneuma»**=հոգի (Մատթ. 4.1) թարգմանվել է որպես «գործուն ուժ» (Ծննդ. 1.2; Յոթանասնից թարգմ.), «հոգևոր կյանք» (Եբր. 12,23), «ներշնչյալ արտահայտություն» (Ա Չովհ. 4.1-ՆԱԹ-63) կամ «ներշնչյալ խոսք» (Ա Չովհ. 4.1-ՆԱԹ-74):

- **«Pisteuo»**=հավատալ-ը դարձել է «հավատքը գործ կոնեն» (Չովհ. 6.40), «ունենալ հավատ» (Մարկ 1.15), «ունենալ հավատ նրա հանդեպ» (Չովհ. 9.38):

Չիշենք, որ Չիսուս ասաց. «...հավատացեք Աստծուն, հավավացեք և ինձ» (Չովհ. 14.1):

Ուրեմն ինչ են ուզում ասել «Եհովայի վկաները» իրենց թարգմանության հավելվածում.

*Չնարելու այս ձևը՝ այսինքն հունարեն նույն բառը ստիպողաբար ֆրանսերեն այլ կերպ դարձնելը մեզ օգնում է ավելի լավ տեսնելու, թե ինչպես էին տերմինն օգտագործում հնում և ինչպես է այն հասկացվում ներշնչյալ գրողների մոտ և ինչ նպատակ է հետապնդում (119):*

## Դիտավորյալ վատ թարգմանված բառեր

- **«Theiotes»** (հուն.) = «divinitas» (լատ.) = «divinite» = «աստվածություն» (Չռոմ. 1.20)՝ ՆԱԹ-ում (63) անսխալ թարգմանված է մեծատառով:

- **«Theotes»** (հուն.)= «deias» (լատ.)<sup>d</sup> = «deite» (Կողոս. 2.9) - ՆԱԹ-ում արտահայտված է «աստվածային էություն»-ով:

Չունարենում առաջին տերմինը ծագել է աստվածային, երկնային «divin» ածականից և արդյունավետորեն տալիս «divinite»-«Աստվածություն»: Երկրորդը ծագել է «Dieu» - «Աստված» բառից և ֆրանսերենում տալիս է «deite», այսինքն՝ նույն Աստծո էությունը՝ բացարձակ իմաստով<sup>e</sup>:

Չռոմեացիների 1.20-ում արարչագործությունը մարդուն ճանաչել է տալիս Աստծո հավերժական զորությունն ու աստվածությունը, բայց Կողոսացիների 2.9-ում Որդու մեջ է, մարմնապես, որ երևա Աստծու բոլոր լեցունությունը՝ աստվածությունը, էությունը: Չիսուսը կարող էր ասել. «... ինձ ով տեսավ, տեսավ Չորը» (Չովհ. 14.9): Բնագրում տերմինն օգտագործված է հավաստի, ավելի շեշտված, քան Չռոմ. 1-ում, ՆԱԹ-ում հակառակն է, այն չի պահում «հովտը», որը լիովին տարբերվում է (Մատթ. 5.18-19):

Ուրեմն այստեղ մենք ունենք Աստծո խոսքի դիտավորյալ նենգափոխման մեկ օրինակ:

Չաճախ կհանդիպենք նման փաստերի եթե վերցնենք Ընկերության ուրիշ հրատարակություններ:

Միայն մեկ օրինակ Նոր Կտակարանից (Չովհ. 3.16.) «...Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց...»:

Դարձել է. «Արարիչն այնքան սիրեց նոր աշխարհը, որ իր միակ Որդուն տվեց, որպեսզի այնտեղ թագավոր լինի» (120)...

## Աղավաղված նախադասություններ

### • Եբր. 1.8

Այս համարում Չիսուս պարզապես Աստված է կոչվում: «Եհովայի վկաները» մի միջոց հնարեցին շրջանցելու համար նման հաստատումը, որը հայիոյություն է:

<sup>d</sup> Օգոստինոսն օգտագործում է այս տերմինը IV դարում («Աստծո քաղաքը», 7.1), բայց նրա ժամանակակից Չերոնիմոսը այս երկու հունարեն բառը թարգմանում է «divinitas».

<sup>e</sup> Ավելի մանրամասն ուսումնասիրության համար տես R.C.Trench-ի «Նոր Կտակարանի հոմանիշներ» երկասիրությունը:

Փոխանակ ասելու՝ «Քո գահը, ով Աստուած...» նրանք ասում են. «Աստված է քո գահը...» Ամենակարողին համեմատելով բազկաթռչի հետ և... Որդուն նստեցնելով Յոր վրա... դա Որդու միանգամայն անհեթեթ փառաբանումն է և Յոր անհարգալից նվաստացումը: Բայց ի՞նչ են ասում բնագրերը:

- **Եբրայերեն.** Սաղմոս 45.6 բառացի այսպես է. «Ով Աստված, քո աթոռը հավիտյանս հավիտենից կա»: ՆԱԹ-ում այն դարձել է՝ «Աստված է քո աթոռը մինչև անորոշ ժամանակներ»: Սաղմոս 146.10-ում ունենք. «...քո Աստվածը, ով Սիոն, ազգից ազգ», այստեղ ՆԱԹ-ն անսխալ ձևով դրել է «ով Սիոն» բառը, ինչպես որ Սաղմոս 45-ում է՝ «ով Աստված»:

- **Հունարեն.** Եբր. 1.8 բառացի այսպես է. «Քո գահը ով Աստված, հավիտյանս հավիտենից»: Ուղղական այստեղ (ho theos) օգտագործված է կոչական հոլովով և եզակի թվով (որ հունարենում գոյություն չունի) «Ով Աստված»<sup>f</sup>: «Եհովայի վկաները» ներդաշնակում են Նոր Կտակարանի մեջբերումները Սաղմոս 45-ում արած աղավաղումներով:

«Եհովայի վկաները» դատապարտում են իրենց, երբ ասում են.

*«Բառացիությունը պահանջում է, որ թարգմանությունը... հնարավորինս հարգի բառերի կարգը եբրայերեն և հունարեն տեքստերում, պահպանի բնագրի ոճը: Գրական ճիշտ թարգմանությունը բնագրին հաղորդում է ռիթմ, գույն և հմայք» (121):*

## Դիտավորյալ փոխված նախադասություններ

### • Ելից 9.6

Եբրայերենում մենք ունենք բառացի. «...եզիպտացիների բոլոր հոտերը մեռան»: ՆԱԹ-ը այն փոխել դարձրել է. «Եվ Եզիպտոսի ամեն տեսակ կենդանիներ սկսեցին սատկել» (հավանաբար՝ համաձայնեցնելու 19 համարի հետ) այն դեպքում, երբ միտքն այսպիսին է. «Փարավոնի բոլոր հոտեր» այդ օրը սատկեցին» (տես 9.5):

Այդ համարի աղավաղումը ոչ մի վարդապետական իմաստ չունի, բայց մենք ընտրեցինք այդ համարը, որպեսզի ցույց տանք, որ ՆԱԹ-ը չի ասում այն, ինչ ասված է եբրայերենում կամ հունարենում:

### • Եբրայեցիներ 1.1-2

ՆԱԹ-ը թարգմանում է. «Աստված... այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր մեկ Որդու միջոցով...»: Այս թարգմանությունը ենթադրել է տալիս, որ Հիսուսը Աստծու որդիներից մեկն է (դա համահունչ է «Եհովայի վկաների» աստվածաբանությանը, որն ասում է, թե Հիսուսը հրեշտակ է միայն) (122): Իսկապես, հունարենում «որդին» որոշյալ հոդ չունի, որպեսզի կարողանանք թարգմանության մեջ օգտագործել այն անորոշ հոդով: Ուրեմն հնարավոր է երկու թարգմանություն.

1. Աստված մեզ հետ խոսեց որդու միջոցով,

2. Աստված մեզ հետ խոսեց մեկ որդու մեջ:

Բայց երկրորդը հակասում է.

- անմիջական տեքստին: Ամբողջ գլուխը Որդու փառաբանության մասին է, և երբեք նրան չի շփոթում հրեշտակների հետ (5-13 համարները):

- Գրվածքների հիմնական ուսմունքի համաձայն Աստծո Որդի Հիսուսը եզակի է (Հովհ. 3.16; 1 Հովհ. 4.9):

Ինչպես մի հանրահայտ թարգմանիչ է ճշտորեն արտահայտվել. «Հոդի բացակայությունն անհնարին է դարձնում ճշգրիտ իմաստն արտահայտել: Աստված, խոսելուն է մարգարեների միջոցով (կամ մեջ), և մնում է տարբերել դրանք. Աստված նրանց համար բերան է դառնում, խոսելով իր որդու (որոշյալ հոդով) մեջ, բառացի՝ որդու միջոցով... Աստված ինքն է խոսում և ոչ մեկ ուրիշը, ոչ որպես Հայր՝ Յոր անձի միջոցով, ոչ միան Սուրբ Հոգու միջոցով՝ ոչ աստվածային մի անձի ծառայությամբ, այլ որպես աստվածային անձ ինքն է խոսում և այդ անձը Որդին է»<sup>g</sup>:

<sup>f</sup> Եհովայի վկաներին շատ հայտնի կիրառման ձևերից (հմմտ. LP, էջ 48-ի հղումը):

<sup>g</sup> 1872թ. Դարբիի հրատարակության Եբր. 1.2-ի ծանոթագրությունը:

• **Եբր. 11.13-16**

Ըստ Ընկերության արդի ուսմունքի, հրեաները «երկնքի կոչվածներ չեն»<sup>\*</sup>: Նշած պարբերությունը հակասում է այդ գաղափարի հաստատմանը, ուրեմն բավական է համեմատել Աստվածաշնչի և Ընկերության գրքերի բովանդակությունը:

Նշենք երեք պարզ աղավաղումներ.

- **13 համար.** «պանդուխտ և օտարական երկրի վրա»՝ ՆԱԹ-ում դարձել է՝ «օտարական և ժամանակավոր բնակիչ տարածքում»<sup>h</sup>:

Մինչդեռ հունարեն նույն արտահայտությունը 12 գլխի 25-ում ՆԱԹ-ը թարգմանել է. «Նա, ով Աստվածային պատգամը տալիս է երկրի վրա»:

- **14-ում** ՆԱԹ-ը թարգմանում է «տեղ» բառով (հուն. - topos), «հայրենիք» բառը (հուն. - patris): Հունարենում իգական սեռի այս բառը լռելյայն հասկացվում է 15 և 16 համարներում, այդ է վկայում ցուցական և հարաբերական դերանունների համաձայնությունը իգական սեռում:

**16 համար.** «երկնային» (հուն. - ep-ouran-ios) ածականը դարձել է «որ պատկանում է երկնքին», այն դեպքում, երբ ճիշտ թարգմանված է մնացած տեղերում<sup>i</sup>:

Հակադրությունը երկնային հայրենիքի և երկրային հայրենիքի միջև դառնում է դժվար ըմբռնելի, և քիչ բան է պետք հասկանալու համար Դիտարանում հրատարակված այն պաշտոնական բացատրությունը, ըստ որի խոսքը վերաբերում է երկնքից ղեկավարվող մի քաղաքի:

*Մի տեղ, որ պատկանում է երկնքին՝ Քրիստոսի կողմից ղեկավարված երկնային թագավորության... Այսպես, նրանք կարող են ապրել երկրի վրա՝ երկնային իշխանության տակ, «քաղաք»՝ որ Եհովան պատրաստել էր նրանց համար (123):*

Երեք փոքրիկ ձևափոխում՝ վերացնելու համար և «խոհեմ ու հավատարիմ ծառայի»՝ նրանց<sup>j</sup> երկնային հույսը, ովքեր երկնքի թագավորության մեջ պիտի բազմեին... (Մատթ. 8.11)<sup>k</sup>:

Պողոս առաքյալի խոսքերից մենք եզրակացնում ենք.

«Շատերը, որոնց մասին շատ անգամ ասել են ձեզ և այժմ էլ լալով են ասում – ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի, նրանց վախճանը կորուստ է..., նրանք միայն երկրավոր բաներ են խորհում»: (Փիլիպ. 3. 18-19):

## Շրջասույթներ

Երբեմն դրանք բացատրություն են ունենում: Դրանում մենք համոզված ենք, բայց դրանք հաճախ օգնում են «Եհովայի վկաների» վարդապետությանը: Ինչո՞ւ եբրայերեն կամ հունարեն մի բառը փոխարինել բազմաթիվ բառերով, երբ այն հեշտությամբ կարելի է փոխարինել համարժեք օտար բառով:

• **Ելից 3.14**

«Ես եմ, որ է»-ն (եբր. ehyeh asher ehyeh) դարձել է. «Ես լինելն ի հայտ բերողն եմ, որ ի հայտ բերեցի լինելը», այն դեպքում, երբ 1953թ. Ընկերության մի աշխատությունում մենք կարող ենք կարդալ. «Ես եմ, որ է» (125). Մի՞թե եբրայերենը փոխվել է 1953-ից 1974 թթ.-ի ընթացքում:

\* Տես Դիտարան, 1982, թիվ 3, էջ 12:

<sup>h</sup> Վեստկոտտի տեքստը, որի վրա հիմնվում են «Եհովայի վկաները», հղում է Ա Մնացորդաց 29.15-ին (էջ 60), որը ՆԱԹ-ը թարգմանել է «երկրի վրա»:

<sup>i</sup> Օրինակի համար տես Հովի. 3.12, Բ Տիմոթ. 4.18, Եբր. 3.1; 8.5; 9.23:

<sup>j</sup> Համեմատություն ըստ Մատթ. 24.45-ի. «Եհովայի վկաների» մոտ խոսքը վերաբերում է ղեկավարությանը, որը նրանց հոգևոր սնունդ է բաժանում, հատկապես՝ Դիտարանը (124):

<sup>k</sup> Պահանջեք մեր հետևյալ անվճարելի «Երկնքի թագավորությունում միայն 144.000 տեղ կա»:

- **Եսայի 63.3**

Այս համարում «հնձանը» դարձել է «հոր գինու համար», անկասկած, հրաժարվելու համար 3-4 դդ-ի «արխայիկ» ոճից՝ օգտագործելով «արտահայտիչ, ժամանակակից, պարզ մի լեզու» (126):

- **Մատթ. 4.9**

Այստեղ «երկրպագել»-ը դարձել է «երկրպագության տուրք մատուցեցին» (նույնը՝ Ղուկաս 4.7-ում): Այս երկար և անօգուտ դարձվածքով ՆԱԹ-ը ջանում է քողարկել «երկրպագություն» և «երկրպագության տուրք մատուցելու» միջև եղած սերտ կապը, որ հանդիպում ենք ուրիշ շատ հատվածներում (Հայտն. 19.4, 10; 22.8): Այսպես, երբ Մատթ. 2.11-ում կարդում ենք. «Եվ ընկան (մոզերը) ու հարգանքի տուրք մատուցեցին փոքրիկ երեխային», մինչդեռ խոսքն այդտեղ երկրպագություն անելու մասին է<sup>1</sup>: Իսկ Հայտնության 5.13-14-ում Աստծու և Գառան առաջ էին, որ երեցներն ընկնում էին նրա առաջ ու երկրպագում:

- **Հովհ. 1.14**

Այստեղ «Շնորհ»-ը դարձել է «չվաստակած բարություն», այնպես որ այդ համարում Հիսուս շնորհ չի բերում այլևս (տես 1.17 համարը), այլ «լի է չվաստակած բարությամբ», կարծես թե Ինքը՝ Աստծո Սուրբ Որդին՝ դարձել է շնորհքի առարկա, որին նա արժանի չէր: Սա արդեն հայիոյություն է<sup>m</sup>:

- **Հովհ. 3.16**

Հունարեն միակ բայը՝ հավատալ (pisteuein), այստեղ թարգմանիչների քմահաճույքով դարձել է «հավատը գործի կոնեն»<sup>n</sup>: Այսպիսի միտումնավոր ձևակերպումը այս դարձվածքում հակասում է սուրբգրային փրկության վարդապետությանը (Եփես. 2.8-9, Գաղատ. 2.16): Նույնն է նաև Հայտ. 12.7-ում՝ «որոնք Աստծու պատվիրաններն էին պահում և Հիսուսի վկայությունն ունեին», որը դարձել է՝ «գործեր ունեին, որ կրում էին Հիսուսի վկայությունը»:

- **Հովհ. 5.25**

Այստեղ «լսել»-ը դարձել է «ուշադրություն դարձնել»:

- **Հովհ. 14.27**

«Զխռովել»-ը դարձել է «վախից դողալ» այն դեպքում, երբ բնագրում հետքն անգամ չկա կրավորական սեռի *դողալ* բայից և պատճառի պարագա՝ վախից:

- **Հովհ. 17.3**

«Ճանաչել»-ը դարձել է՝ «գիտելիք ունենալ» (ՆԱԹ 63):

- **Հովհ. 19.41**

«Գերեզմանն» անկասկած իր ծագումնաբանության պատճառով դարձել է՝ «հիշատակի տապանաքար», թեպետ այդ դեպքում հարց է ծագում, թե ինչպես կարող էր այն դառնալ գերեզմանաքար, եթե այնտեղ դեռ ոչ մեկին չէին դրել:

<sup>1</sup> Մատթ. 2.11 և 4.9-ում ճիշտ նույն ձևն է կիրառված՝ *pipto*(=ընկնել) և *proskuneo* (=երկրպագել), ուր անցյալ կատարյալ դերբայները կապված են իրար հետ և վերաբերում են միևնույն անձնանունին: Եթե ՆԱԹ-ի կոմիտեն նույն ձևով է թարգմանում երկու դեպքերում, ապա Մատթ. 2.11-ը կլինի՝ «Եվ ընկնելով (մոզերը) երկրպագության տուրք մատուցեցին փոքրիկ երեխայի առաջ»: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են...

<sup>m</sup> ՆԱԹ-ը իր անվանացանկում նշում է, որ «շնորհ» բառը օգտագործված է Ա Կորնթ. 12.23-ում: Սա ճիշտ է, ՆԱԹ-ը այդ բառը հաճախ է կիրառում, բայց ոչ որպես հունարեն *charis* (=շնորհ) բառի, այլ՝ *euschemsunen*-ի իմաստով, որը նշանակում է պարկեշտ, վայելուչ: Սա դարձյալ կեղծիք է: ՆԱԹ-ը նաև օգտագործում է նախդիր «շնորհ»-ի հետ (որն լատիներենում է առկա և ոչ հունարենում), որպեսզի ավելի անհասկանալի դարձնի այն (Հռոմ. 3.24, 5.2 և այլն):  
n Ա Հովհ. 3.23-ում՝ «հավատ ունենալ»:

▪ **Հոռն. 3.24**

Դարբին այս համարը բառացի թարգմանել է այսպես. «Ձրի արդարանալով նրա շնորհով, այն փրկությամբ, որ Հիսուս Քրիստոսի մեջ է»:

Այժմ տեսեք բառերի սխալ շրջադարձմամբ ինչ է դարձել այս համարը ՆԱԹ-ում. «Եվ դա ձրի պարզև է, որ նրանց արդար է հայտարարում նրա՝ Հիսուս Քրիստոսի անարժան շնորհով, փրկագին վճարելով և ազատելով»:

Համեմատության համար նշենք, որ հունարենում այս համարն ունի 12 բառ, Դարբին օգտագործել է 15-ը, Սեգունդը՝ 19, ՆԱԹ-ը՝ 26.

Մենք կարող ենք բերել շատ օրինակներ, բայց այս էլ բավական է ցույց տալու, որ ՆԱԹ-ը աղավաղում է տեքստը: Համեմատեք, թե ինչպես են ներկայացնում նրանք ՆԱԹ-ը:

*Թարգմանության մեջ հավատարմությունը բառացիության մեջ է, որ պահանջում է այսպես ասած բառ առ բառ թարգմանությունը և կապը եբրայերեն և հունարեն տեքստերի միջև (127):*

### **Բայի ժամանակների փոփոխություններ**

▪ **Հովի. 8.58**

«Հիսուս նրանց ասաց. «Ես եմ»: Դա մի շատ կարևոր հայտարարություն է: Ըստ «Եհովայի վկաների պետք է ասվեր. «Ես եղել եմ» (ՆԱԹ 63) կամ «Ես էի» (ՆԱԹ 74):

Բնագրում ժամանակային առումով ունենք «...նախքան Աբրահամի լինելը...», որին հետևում է՝ «Ես եմ» ուղիղ խոսքը, և նույնը՝ արտահայտիչ ձևով՝ «Ահա ես, ես եմ», որ հավիտենական գոյության հռչակումն է՝ համապատասխան Տետրագրամի իմաստին («նա է») և Ելից 3.14-ում՝ «Ես եմ»-ին:

Այստեղ միտումնավոր մի կոպիտ աղավաղում է, որը ոչ մի հիմնավորում չունի:

### **Ձեռագրագիտական աճպարարություններ**

Հայտնի է, որ բնագրերը մեծ մասամբ մեծատառ են և առանց կետադրական նշանների, ինչը թարգմանիչներին թույլ է տալիս օգտվել այս երկու գործոններից, աղավաղել տեքստը: Բերենք երկու օրինակ.

▪ **Ղուկաս 23.43**

Այս համարը ՆԱԹ-ում թարգմանված է. «Ճշմարիտ եմ ասում քեզ այսօր, դու ինձ հետ դրախտում կլինես», որն այն իմաստն ունի, թե Հիսուս ուզում է ասել,

*որ երբ Աստված կհաստատի Թագավորությունը և այն կվերադարձնի իրեն, և երկրային դրախտը վերականգնած կլինի, այդ չարագործն էլ կմասնակցի վերակենդանացմանը, առիթ կունենա հավիտենական կյանք ձեռք բերելու (128):*

- Վեստկոտտի տեքստը բառացի ասում է. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր դու ինձ հետ կլինես դրախտում»: Ընկերության մեկնաբանությունը ճշտում է. դա արվել է թարգմանիչների կրոնական հավատի պատճառով (129)°, և մենք հարց ենք տալիս. «ՆԱԹ-ի կողմից կատարված «գերազանց տեքստը» նո՞ւյնպես վարակված էր «կրոնական ավանդույթներով»:

- Ժամանակի մակբայը, ըստ հունարենի կարգի և իմաստի, վերաբերում է «դու կլինես»-ին և ոչ թե «ես քեզ ասում եմ» կապակցությանը: Եթե ես իմ երեխային ասեմ. «Ես քեզ ասում եմ այսօր դու ինձ հետ կգաս քո զարմիկների մոտ», նա ուրիշ բան չի հասկանա, բացի նրանից, ինչ բառերն ասում են բացահայտորեն:

- Մյուս համարները, ինչպես Բ Կորնթ. 5.8 և Փիլիպ. 1.23-ը, հաստատում են, որ հավատացյալը մահվանից հետո մեկնում է և Տիրոջ հետ է լինում:

---

o Այստեղ խոսքը ոչ թե «թարգմանության» այլ երկու աշխարհահռչակ անգլիացիների՝ Վեստկոտտի և Հորտի կողմից հաստատված «տեքստի» մասին է (130):

▪ **Չովի. 1.1**

Այս հատվածը ՆԱԹ-ում դարձել է «Բանը աստված էր»: Մեզ ասում են, որ փոքրատառ «Ա» են գրում, քանի որ հունարենում «Աստված» բառը հող չունի<sup>Ք</sup>:

Ինչո՞ւ ՆԱԹ-ը 6, 12, 13 համարներում փոքրատառով չի գրում, չնայած հունարեն այդ համարներում ևս Աստված բառ հող չունի:

- Ինչո՞ւ 13-րդ գլխի 3 համարում երկու անգամ Ա-ն մեծատառով է գրված «Աստված» բառում: Չունարենում առաջին «theos=Աստված» բառը առանց որոշյալ հողի է, իսկ երկրորդ դեպքում՝ այն կա: Այդտեղ «Եհովայի վկաները» թարգմանում են, ինչպես ուզում են ելնելով իրենց դավանանքից:

Բերենք նրանց իսկ խոստովանությունը.

*1933 թ. հունագետ Կոլվելը անգլերեն լեզվով մի հողված հրատարակեց՝ «Չունարեն Նոր Կտակարանում հողի գործածության համառոտ կանոններ» վերնագրով: Նա գրում էր. «Ուղղական հողովում որոշիչը նախորդում է հողին, երբ այն հաջորդում է բային. այն հող չի ընդունում, եթե այն նախորդում է բային... Այն ուղղականում թարգմանվում է անորոշ ձևով միայն մի պայմանով. եթե նրա առջև հող չկա: Եթե ենթատեքստից հասկացվում է, որ այն որոշյալ է, պետք է թարգմանել որպես որոշյալ գոյական, չնայած հող չունի» (132): Օրենքը կիրարկելի է Չովի. 1.1-ի համար:*

*Մեկնաբանությունն ավելացնում է. բայց դա անփոփոխ քերականական կանոն չէ: Դա բիբլեիստների և թարգմանիչների «անհատական որոշման» հարցն է:*

*ՆԱԹ-ի Կոմիտեն մի ուրիշ կարծիք է, երբ տալիս է THEOS բառի «աստված» թարգմանությունը (133):*

Ինչպես ոմն մեկը գրել է. «Սատանայի հրաշքներից մեկն այն կլինի, երբ Աստվածաշնչում ասվի, թե «Բանը Աստված չէ», այն դեպքում, երբ հստակորեն գրված է. «Բանը Աստված է»:

Նման վերաբերմունքի դիմաց մենք մեզ մեկ անգամ ևս հարց ենք տալիս, ո՞րն է նմանօրինակ հայտարարության իմաստը. «*հավատարիմ թարգմանությունը չպետք է ազդվի թարգմանչի կանխակալ գաղափարներից*» (134): Սա հենց այն է, ինչ չի անում ՆԱԹ-ի հանձնաժողովը երկար ժամանակ իր թարգմանություններում:

**Վերջաբան**

Նենգափոխված համարների մեծ մասն առնչվում է Քրիստոսի աստվածությանը<sup>Ք</sup>: Ինչպես հրեաները, որ Չիսուսին ասում էին. «Բարի գործի համար քեզ չենք քարկոծում, այլ հայիոյության համար, քանի որ դու մարդ ես, ինքդ քեզ Աստծո տեղ ես դնում» (Չովի. 10.31), այդպես էլ «Եհովայի վկաներն» են. այս է գայթակղության քարը: «Վկաները», ըստ իրենց, ուզում էին հասկանալ «գաղտնի խորհուրդը» (Ա Տիմոթ 3.16-ՆԱԹ)՝ մարմնավորումը (Չիսուս Քրիստոս՝ միաժամանակ Մարդ է և Աստված): Ահա թե «Եհովայի վկաներին» ուր է տանում իրենց մարդկային տրամաբանությունը.

*Եթե Չիսուս Աստված է, ուրեմն տիեզերքի արարիչն 9 ամիս շարունակ գտնվել է մի կնոջ արգանդում: Դա նշանակում է, որ Ամենակարողը քայլել է չորեքթաթ՝ նորածնի նման: Իսկապե՞ս հավատում եք այդ բանին (135):*

*Քանի որ «Բանը» «Աստծո Որդին» է, այն ունի սկիզբ: Իրականում որդին միշտ ավելի երիտասարդ է, քան հայրը: Չայրը ինքը գոյություն է ունեցել միշտ (136):*

*Ինչպես որ մենք չենք կարող գիտականորեն հաշվել, որ 1 Աստված (Չայրը) + 1 Աստված (Որդին) + 1 Աստված (Սուրբ Չոգի) = 1 Աստված, մենք այլընտրանք չունենք, քան մտածել, որ 1/3 Աստված (Չայրը) + 1/3 Աստված (Որդին) + 1/3 Աստված (Սուրբ Չոգի) = 3/3 Աստծու կամ 1 Աստված (137):*

<sup>Ք</sup> Չովի. 20.28-ում ունենք. «Թովմասը պատասխանում և ասում է. «Իմ Տերս և իմ Աստվածս», այստեղ «theos»-ից առաջ կա որոշյալ հող: Դա չի խանգարում «Եհովայի վկաներին» գրելու. «Թովմասը Չիսուսին դիմում է ինչպես «Աստված»՝ նեղ իմաստով «մի Աստված» և ոչ «Ամենակարող Աստված» (131): Մի՞թե կարելի է դիմել բազմաթիվ Աստվածների և չլինել բազմաստված: Գ Պահանջեք անվճար մեր հետևյալ գրքույկը՝ «Ո՞վ է Չիսուս Քրիստոսը՝ ըստ Աստվածաշնչի»:

Ընթերցող, Ձեր հավիտենական ապագան կախված է Հիսուս Քրիստոսի Անձի և Գործի իմացությունից.

- Դուք վիճաբանում եք, թե ինչ է նա ասում: Դուք դատապարտված եք (Հովհ. 12.48):
- Դուք ընդունում եք ինչ նա է ասում: Դուք փրկված եք (Հովհ. 17.8,24):

Աստվածաշունչը մեզ ավետում է. «Շնչավոր մարդը (այն մարդը, որ դարձի չի եկել, Աստծո Հոգին չի ընդունել» – Հուդա 19) Աստծու Հոգու Բաները չի ընդունում, «որովհետև դրանք իրեն հիմարություն են և չի կարող իմանալ, որովհետև հոգևոր կերպով են քննվում» (Ա Կորնթ. 2.14):

***Դուք, որ կարդում եք այս բրոշյուրը փրկված եք:***

## Եզրակացություն

---

**«Եհովայի վկաներ»-ն ասում են.**

*Նոր Աստվածաշունչը հենց այն է, որի կարիքը մենք զգում ենք (138):*

*Հասկանալով այս թարգմանության արժեքն ու կարևորությունը... ավելի հարմար է դրա, քան մեկ ուրիշի օգտագործումը (139):*

### Այս գրքի հեղինակի կողմից

Առաքյալները կոչ են անում հավատացյալներին.

- Չկեղծել Աստծո Խոսքը (Բ Կորնթ. 2.17)
- Չեննգափոխել Աստծո Խոսքը (Բ Կորնթ. 4.2)
- Ծուռ չմեկնել Սուրբ Գրքերը (Բ Պողոս. 3.16):

Մենք ցավով պետք է նշենք, որ վերևում ասվածներն հենց այն են, ինչ Եհովայի վկաները վերագրում են իրենց՝ իհարկե սխալ<sup>a</sup>:

Մեր եզրակացությունը մենք կձևակերպենք այսպես.

**ՆԱԹ-ի թարգմանությունը չի կարող Աստծո խոսք համարվել: Դա ճշմարտության բացահայտ եննգափոխումն է. հեզմանք է Աստվածաշնչի հանդեպ:**

*Տարածելով այս եննգափոխված Աստվածաշունչը՝ Դուք ձեր վրա եք վերցնում Հայտնության 22. 18 և 19 համարների նզովքը:*

*Առանց հապաղելու ազատեք Ձեզ լուստ հրեշտակի կերպարանք ընդունած Սատանայի ցանցից (Բ Կորնթ. 11.14): Թովմասի նման Ձեզ Տիրոջ՝ Հիսուսի ոտքերի տակ նետեք և ներում խնդրեք: Վերջապես ասացեք՝ «Տէր իմ և Աստուած իմ» (Հովհ. 20.28):*

---

<sup>a</sup> Պահանջեք անվճար մեր գրքույկը՝ «Եհովայի վկաներ» թե՞ «Հիսուսի վկաներ»:



**«Եհովայի վկաների» հրատարակություններ**  
**Նշված աշխատությունը .համառոտագրությունը .հղումները**

---

TMN	Նոր աշխարհի թարգմանություն (ՆԱԹ), 1974թ. հրատարակություն
BI	Ներքին Բյուլետեն (71-74 թթ.)
TG	«Դիտարան», պարբերական (75-80 թթ.)
RV	«Արթնացե՛ք», պարբերական (75-80թթ.)
NMR	Մեր ծառայությունը թագավորությանը (74-80թթ.)
ROY	Թագավորություն, 31թ. հրատ.
AV	Ազդարար, 38թ. հրատ.
VA	Եզնարտությունը Ձեզ կազատի, 47թ. հրատ.
Équipé	Բարի գործերի համար զինված, 51թ. հրատ.
CT	Աստվածապետական համաբարբառ, 53թ. հրատ.
QDV	Թող Աստված լինի ճշմարիտ, 54թ. հրատ.
LP	Աստծո Խոսքն ըստ Հովաննու, 62թ. հրատ.
QUA	Պատրաստություն ծառայության համար, 62թ. հրատ.
TE	Ամբողջ Գիրքը Աստվածաշունչ է և օգտակար, 87թ. հրատ.
VVE	Եզնարտություն, որ առաջնորդում է հավիտենական կյանքի, 68թ. հրատ.
PAI	Խաղաղություն երկրի վրա - Միջազգային համաժողով, 69թ. հրատ.
PAIX	Խաղաղություն երկրի վրա - Ձեկույց, 69թ. հրատ.
DD	Եհովայի վկաները Աստվածային կամքի մեջ, 71թ. հրատ.
Questions	Հարցեր, որ տալիս են մարդիկ... 76թ. հրատ.
FIN	Աշխարհի մոտալուտ վախճանը, 79թ. հրատ.
Famille	Ինչպե՞ս ունենալ երջանիկ ընտանեկան կյանք, 79թ. հրատ.

---

- |          |                          |              |                                   |
|----------|--------------------------|--------------|-----------------------------------|
| 1. DD    | էջ 257                   | 28. TG       | հոկտ. 1880, էջ 144 (անգլ.), TG    |
| 2. ROY   | էջ 63                    |              | 15 հոկտ. 1945, էջ 313 անգլ.       |
| 3. TE    | էջ 311                   | 29. TG,      | 80, թիվ 23, էջ 31                 |
| 4. TE    | էջ 323                   | 30. VVE,     | էջ 36                             |
| 5. TE    | էջ 324                   | 31. VVE,     | էջ 34-35                          |
| 6. TE    | էջ 319                   | 32. VVE,     | էջ 35                             |
| 7. TMN   | 63, էջ 6                 | 33. VA,      | էջ 32                             |
| 8. TG    | 75, թիվ 7, էջ 224        | 34. VVE,     | էջ 17                             |
| 9. TG    | 79, թիվ 3, էջ 32         | 35. TG,      | 77, թիվ 22, էջ 702                |
| 10. TE,  | էջ 320                   | 36. TG,      | 78, թիվ 15, էջ 16                 |
| 11. TE,  | էջ 320                   | 37. BI,      | 72, թիվ 11, էջ 28                 |
| 12. TMN, | էջ 3                     | 38. TG       | 80, թիվ 9, էջ 6                   |
| 13. TMN, | էջ 6                     | 39. TG       | 80, թիվ 9 էջ 11; BI 72, թիվ 23 էջ |
| 14. TG,  | 1.11.49, էջ 322          |              | 38                                |
| 15. ROY, | էջ 5                     | 40. DD,      | էջ 258                            |
| 16. TE,  | էջ 323                   | 41. TE,      | էջ 319                            |
| 17. TE , | էջ 316                   | 42. TMN      | 50 էջ 25                          |
| 18. TE,  | էջ 318                   | 43. TG,      | 80 թիվ 9, էջ 7                    |
| 19. TE,  | էջ 299                   | 44. QDV,     | էջ 13-14                          |
| 20. TG,  | 75, թիվ 6, էջ 192        | 45. VA,      | էջ 286                            |
| 21. TG,  | 75, թիվ 6, էջ 191        | 46. ROY,     | էջ 34, հմմտ. Fin էջ 108           |
| 22. TMN, | էջ 6                     | 47. Équipé,  | էջ 26                             |
| 23. DD,  | էջ 257                   | 48. BI,      | 72, թիվ 11, էջ 26                 |
| 24. DD,  | էջ 257                   | 49. Famille, | էջ 191                            |
| 25. ROY, | էջ 14 և 30               | 50. VVE,     | էջ 17                             |
| 26. RV   | 72, թիվ 14, էջ 5,8       | 51. TG,      | 80, թիվ 9, էջ 16                  |
| 27. TG   | 15.7.1889, էջ 2337 անգլ. | 52. TG,      | 80, թիվ 9, էջ 7                   |

53. PAI, էջ 6
54. Équipé, էջ 25 և 26
55. TG, 80, թիվ 9, էջ 6 և 7
56. BI, 72, թիվ 23, էջ 38
57. BI, 72, թիվ 23, էջ 39
58. TMN 50, էջ 12
59. VVE, էջ 18
60. TG, 80, թիվ 9, էջ 11
61. DD, էջ 258
62. DD, էջ 257
63. TMN 50, էջ 25
64. Équipé, էջ 26
65. TMN 50, էջ 25
66. TG, 80, թիվ 9, էջ 6
67. CT, էջ 202
68. TMN, էջ 1454
69. DD, էջ 258
70. Équipé, էջ 45
71. Équipé, էջ 51
72. BI, 72, թիվ 1, էջ 42
73. TG, 80, թիվ 9, էջ 7 և 8
74. TE, էջ 310
75. BI, 72, թիվ 23, էջ 39
76. TG, 78, թիվ 15, էջ 10
77. TMN 50, էջ 10
78. TMN 50, էջ 11
79. TG, 78, թիվ 15, էջ 5
80. TG, 78, թիվ 15, էջ 8
81. TG, 78, թիվ 15, էջ 8
82. TG, 78, թիվ 15, էջ 9
83. TG, 78, թիվ 15, էջ 10
84. TMN 50, էջ 18
85. TMN 50, էջ 18
86. TG, 78, թիվ 15, էջ 12
87. TG, 78, թիվ 15, էջ 7 և 8
88. TMN 50, էջ 12-18
89. TMN 50, էջ 12; TE, էջ 310; TG, 77, էջ 441
90. TG, 78, թիվ 15, էջ 10
91. TMN 50, էջ 24
92. TMN 50, էջ 24
93. TMN 50, էջ 24
94. BI 73, թիվ 13, էջ 43
95. TE, էջ 301
96. TMN 50, էջ 24
97. AV, էջ 20 և 45; Questions, էջ 11; Équipé, էջ 17
98. TG 80, թիվ 9, էջ 10-11
99. VVE, էջ 17
100. Équipé, էջ 26
101. TMN 50, էջ 12 և 15
102. TE, էջ 319
103. TE, էջ 319
104. TE, էջ 309
105. TE, էջ 309
106. TG, 78, թիվ 15, էջ 10
107. TG, 78, թիվ 15, էջ 10
108. TMN 50, էջ 20
109. TE, էջ 344
110. TG, 79, թիվ 13, էջ 5
111. DD, էջ 258
112. TE, էջ 311
113. TE, էջ 309
114. TE, էջ 311
115. TMN, էջ 6
116. TMN 63, էջ 5
117. RV 75, թիվ 20, էջ 32; TG 76, թիվ 19, էջ 608
118. BI, 70, թիվ 23, էջ 18
119. TMN, էջ 1457; հմնտ. TMN 63, էջ 5
120. QDV, էջ 155
121. TE, էջ 318
122. TG, 80, N թիվ 22, էջ 20
123. TG, 79, թիվ 19, էջ 18
124. NMR, դեկտ. 74, էջ 1; TG 1.11. 49, էջ 322; QUA, էջ 158; DD էջ 22; BI, 72 թիվ 24, էջ 26-27
125. CT, էջ 202
126. TE, էջ 320
127. TE, էջ 318
128. BI, 71, թիվ 21, էջ 48
129. BI, 71, թիվ 21, էջ 46
130. DD, էջ 258
131. RV 72, թիվ 14, էջ 6
132. TG էջ 76 126 և 127
133. TG, 76, էջ 127
134. PAIX, էջ 26
135. BI, 72, թիվ 1, էջ 43
136. TG, 75, թիվ 13, էջ 399
137. LP, էջ 7
138. NMR, դեկտ. 74, էջ 1
139. NMR, դեկտ. 74, էջ 1

